

Հ.Յ.Գ. ԲԱ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ.Ր.Բ. ԲՍ  
LIBRARY

„Droschak”

ORGANE  
de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

### ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ

### ՊԱՐՏԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### II

Քսան տարի շարունակ տւինք աշխարհին անհատական և խմբական հերոսութիւնների, չքնադ, անձնուրաց հայրենասիրութեան ամենափայլուն պայցոյցներ — այժմ մեր կենտրոնական պարտաւորութիւնը պիտի լինի—հետևելով արևմտեան ուսման արժեքներին, հասարակ մեր ծրագրին, անցեալին, աւանդութիւններին—արծարծել ու իրագործել ներդաշնակ միջազգայնութեան գաղափարը այն հաւաքական հայրենիքում, որի անունն է Տաճկաստան:

„Կենտրոնական պարտաւորութիւն” — անտարակոյս, քանի որ այդ գաղափարի աստիճանական իրագործման մէջ է միայն, որ կարող է ապրել ու բարգաւաճել մեր ազգային ու ժողովրդական էութիւնը ևս:

„Հաւատարիմ մեր անցեալին” — անտարակոյս, քանի որ միջազգայնութեան սկզբունքը եղել է սկզբից ի վեր անկիւնաքարը մեր հասարակական-քաղաքական դաւանանքին: Մեր ծրագիրը ներագործել ու խրախուսել է այն մեր տակտիկը, մեր ընկերների խօսքն ու գործը շիտակօրէն, անկեղծօրէն հանդէպ են գնացել մեր դրացիների լաւագոյն տարրերի համերաշխութեան հազարէպ յորդորներին ու հրաւերներին:

Քարոզել ենք այն նոյնիսկ այնպիսի ժամանակներում, նոյնիսկ այնպիսի միջավայրերում, ուր դրացիները պատասխանել են մեզ վազրի հոնդիւնով և գնդակների սուրբոցներով: Մեր պաղատագին կոչերը զարնւում էին ապառաժներին, մեր հոյակապ պրօպագանդիստները, համերաշխութեան ու եղբայրութեան մեր առաքելները նամարդօրէն մորթուում էին քրդերի ձեռքով: Մի պաղ, անողորմ դժօխք չէզոքացնում էր ամենաազնիւ ճիգերը, չորացնում էր մարդկայնութեան ու հասարակականութեան ամենաչքնադ ծաղիկները:

Չենք վհատել և քարոզել ենք միշտ, հաւատալով, որ մի օր, վերջապէս, կ'ամբռնի նոյնիսկ այդ ամբհի գազանանոցը, կը փարատի նախապատմական բարբերի այդ աղջամուղը և մենք կը հնչենք մեր սերմանած գաղափարների պտուղը:

Մեր կուրը — շարունակ յայտարարել ենք այդ — եղել է միշտ բռնակալ կառավարութեան դէմ, ոչ այս կամ այն ժողովրդի դէմ, ինչպէս ձգտել են հաւատացնել մեր թշնամիներն ու հակառակորդները, սկսած տիրահաւակ Մուրադ բէյից — որ 12 տարի սրանից առաջ իր մի բրօշիւրով \*) ներկայացնում էր հայ յեղափոխականներին յաջա Եւրոպայի, իբրև մահմեդական ժողովուրդների երդւեալ սոսիսներ, նրանց դահիճներ ու կոտորողներ — մինչև „Երիտասարդ Թիւրքիայի” ուրիշ կարգի ռահվիրաները, աւելի անկաշառ ու գաղափարական, որոնք սակայն պատել են հայ մարտիկներին նոյն մուրադական տերմինօլօգիայով ու եռանդով:

Եղել են, անշուշտ, զուտ վրէժխնդրութեան գործողութիւններ ևս հայ յեղափոխական պայքարի միջոցին, եղել են անհատական մահափորձեր այս կամ այն տաճիկ կամ քիւրդ վաժպիրի դէմ, եղել է և խմբական մեծ յարձակումը Խանասորի դաշտում մի սարսափելի աշիրէթի դէմ, բայց այդ բոլոր վրիժառու գործողութիւնները ուղղւած են եղել ոչ մահմեդականութեան, ոչ քիւրդ ու տաճիկ ժողովուրդներին, այլ միայն նրանց այն արիւնարբու ցեղանհատների ու հատաձնների դէմ, որոնք յօժարակամ գործիք են դարձել հայաջինջ բռնակալութեան ձեռքում և անանցանելի խոչընդոտ կանգնել յեղափոխութեան ճանապարհի վրայ: Պրօփօկացիան, գիտակցական գրգռումը դրացի ժողովուրդների դէմ երբէք տեղ չի գտել ոչ „Դաշնակցութեան”, ոչ էլ ուրիշ հայ յեղափոխական կուսակցութիւնների տակտիկի մէջ, ի բաց առեալ մի քանի թեթև վրիպումներ շարժման սկզբներում — հայ յարձակողական նացիօնալիզմի կարճատև տիրապետութեան օրով — վրիպումներ՝ որոնք, սակայն, երբէք չեն անցել ամուլ խօսքի ու թէօրիական պրօպագանդի շրջանակներից:

Քիչ բան շահեցինք համերաշխութեան երկար տարիների մեր բարոզներով: հազիւ կարողացանք գինուրագրել մեր դրօշակի տակ մի քանի տաճիկ ու քիւրդ ղրկները — „տարապայման ծնունդ մի զարհուրելի իրականութեան — որոնք հաւատարմութեամբ աջակցեցին մեզ և նոյնիսկ կուսեցին մեր ազատամարտը Արաուլի ստորոտներում ու Սասունում:

\*) Force et faiblesse de la Turquie

Ժամանակները փոխուում են, պրօպագանդի ճանապարհը—հարթուում է ու լայնանում: Մահմեդական զանգեւածները հոգեբանութիւնը առայժմ նոյնն է ընդհանուր առմամբ, բայց այլևս չը կան նախկին անջրպետները. կայ որոշ հնարաւորութիւն՝ մօտենալու, շփուելու մեր դրացիների հետ, ստեղծուում է կամաց-կամաց մի մթնոլորտ, ուր ազգերի համերաշխութեան, միջազգայնութեան գաղափարը կարող է բողբոջել ու զարգանալ:

Գենտրօնական կառավարութիւնը իր կողմից, անտարակոյս, շատ բան կարող է անել՝ խախտած կապերը վերահաստատելու, բացւած վէրքերը կազդուրելու և ազգամիջեան համերաշխութիւնը ամրապնդելու նպատակով: Դրա համար պէտք է աշխատել, Թիւրքիոյ բոլոր ռամկավարական տարրերը պէտք է աշխատեն, որ միջազգայնութեան սկզբունքը արիւն ու մարմին դառնայ պետութեան բովանդակ վարչական մեխանիզմի մէջ, որ կենտրօնական կառավարութիւնը ևս լինի անկեղծօրէն ու շիտակօրէն ի ն տ եր ն ա ց ի օ ն ա լ, — ոչ ն ա ց ի օ ն ա լ, միջազգային,— ոչ ազգային:

Պետութիւնը, այո, հսկայական դեր ունի խաղալու, բայց աւելի էական գործ է՝ զարկ տալ հասարակական ուրոյն ուժերին ու նախաձեռնութեան:

Մեզ վիճակւած է լինել այդ նոր, բարեշրջող մթնոլորտի մէջ ամենախոշոր ու վճռական գործօններից մինը: Հայ մտաւորականութեան առանձին դիրքը և պատասխանատուութեան զգացումը թելագրում են նրան ծանրակշիւ պարտաւորութիւններ: Որքան որ մենք պարտաւոր ենք զգոյշ լինել ազգայնութեան ու հաւաքական ինքնապաշտպանութեան մեր ամենօրեայ քարոզների մէջ, չը տալ պատրականներ անգիտակից հակառակորդին, չը տալ տեղիք թիւրիմացութեան, — նոյնքան պարտաւոր ենք զգոյշ ու շրջահայեաց լինել միջազգայնութեան պրօպագանդի մէջ...

Եւ նախ՝ ընդունենք միանգամ ընդմիշտ, որ դատապարտուում ենք շաբլօնը, որ չենք ուզում փոխադրած տեսնել մեր երկրի մէջ պատրաստի Փօրմոլլները, ձեւակերպութիւններ, սքեմներ: Եւրոպական ռամկավարութեան նշանաբանները չի կարելի կիրառել մէկէն ի մէկ պարզ սիմպլիստ, շաբլօնական ձեւերով, այլ պէտք է ձգտել յարմարեցնել նրանց՝ առանձնատուկ միջավայրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական պայմաններին:

Եւրոպայից, առաջագէմ ազգութիւններից պիտի փոխառնենք անհրաժեշտագոյնը, — հետազօտութեան մեթօդը՝ նրանով զինւած՝ պէտք է նախ և առաջ ուսուումն ասիրենք մեր միջավայրը. ուսումնասիրենք, որպէսզի գտնենք շփման կէտերը մեր և դրացի աշխատաւոր համայնքների միջև, որպէսզի որոշենք այն լաւագոյն տակտիկը, գործելակերպը, որով կարող ենք ուժգին մղում տալ միջազգայնութեան

թեան բաղձալի հոսանքին, հոգալով հանդերձ միաժամանակ մեր սեփական ազգայնութեան շահերը, նրա տնտեսական ու քաղաքակրթական առաջադիմութիւնը:

Երկրի ուսումնասիրութիւն — ահա ինքնին պատկառելի մի գործ: Ահա մի գործ, որով դժբախտաբար, մինչև օրս շատ քիչ ենք զբաղւել, գրեթէ չենք զբաղւել: Ցաւ ու ամօթ է յիշատակել, որ բնան տարուց ի վեր յեղափոխական կազմակերպութիւնները չեն կատարել մի հատիկ լուրջ հետազօտութիւն այն տնտեսական ու ցեղագրական միջավայրի մասին, ուր խաղացել է հայկական կուլտուրայի ուղեբեռութիւնը: Մենք չունինք անգամ մի հատիկ լուրջ գործ հարկատուութեան սիստեմի կամ սիստեմների մասին, հին ըէժիմի տակ. չունինք ոչինչ և հողային ու արհեստային վիճակների, այլևայլ ժողովուրդների պարամունքի, համայնական կենցաղի, դասակարգային շերտաւորումների մասին և այլն: Չը կայ շատ թէ քիչ արժէքաւոր ուսումնասիրութիւն մեր գրականութեան մէջ նոյնիսկ Թիւրքիոյ ընդհանուր իրաւական կացութեան մասին — հին ըէժիմի տակ — որ սահմանադրութիւնը, հաւանականօրէն, չը պիտի կարողանայ կամ չը պիտի կամենայ յեղաշրջել շուտ ու արմատապէս...

Լուրջ հետազօտութիւնների բացակայութեան մեղքը հարկաւ, ընկնում է աւելի չէ զոք մտաւորականութեան, բան յեղափոխական կազմակերպութիւնների վրայ, որոնք տարւած կուլտիւրական անհրաժեշտութեամբ, մշտնջենաւոր լարման վիճակում, քիչ կունենային ազատ ժամանակ և մանաւանդ տրամադրութիւն՝ զբաղւելու տնտեսական ուսումնասիրութիւններով: Համիդեան խաւարն ու դժոխքը այդ դէպքում ևս, անտարակոյս, հանդիսանում է, իբրև մեծագոյն յանցաւորը, նա կաշկանդել է անգամ պաղ, անդամահատող, տնտեսական մտքի շարժումները, որպէսզի մարդկանց գլուխների մէջ ևս թագաւորէր յաւիտենօրէն — այդ դժոխք-երկրի վերաբերմամբ — անվերձանելի քաօսը...

Այսօր հնարաւոր է մօտենալ այդ քաօսին խուզարկուի հետաքրքիր ու տենդոտ հայեացքով — և դա պէտք է լինի մեր կարգինալ պարտաւորութիւններից մինը:

Պետութիւնը ճաճկաստանում — մի ահաւոր հանգոյց է, որպիսին դժւար է գտնել երկրագնդի որևէ այլ կէտում: Տնտեսութեան և քաղաքակրթութեան տարբերաստիճանները խճողում ու բախում են իրար միեզակի իրականութեան մէջ, ուր կրօնների տարբերութիւնը միայնակ ստեղծում է յաճախ անանցանելի խրամատներ ժողովուրդների մէջ, թունաւորում է դրացիական համայնակենցաղը, պայթում է երբեմն արհաւիրալի անակնկալներով...

Որքան կնձիռներ — յաղթահարելու... Որպիսին գերմարդկային տակտ, համբերութիւն ու զգուշութիւն է պէտք այն գործիչներին, որոնք գիտութեան և լուսա-

ւորութեան ջահով զինւած, պիտի շարժին, խարխափելով այդ իրականութեան մէջ, պիտի հնչեցնեն հատուութեան, եղբայրութեան դողանքը, պիտի ձգտեն կառուցանելու աւերակների վրայ միջազգայնութեան հմայիչ շէնքը...

Աւերակը—ամենուրեք, կեանքի բոլոր ասպարէզներում, գործունէութեան բոլոր ճիւղերում: Տնտեսական առաջադիմութիւնը մէկն է ամենահզօր խթաններից ամբողջ կուլտուրական առաջադիմութեան իսկ «տնտեսական» խարխլւած է, չորցած, անդամալուծւած: Համիդեան ըէֆիմը, սուլթանների ըէֆիմը ընդհանրապէս, դարերից ի վեր հոգացել է ամենից առաջ ցամաքեցնելու ժողովուրդների ամենասուցիչ աղբիւրները, որպէսզի ստեղծէ պարիսների անմուռն, իրէպլական հպատակութիւնը:

Պ ե տ ու թ ի լ է ն ը եղել է հարազատ արտայայտիչը տնտեսութեան. թէ մէկը, թէ միւսը քարացել են, անշարժացել դարերից ի վեր, իրարու վրայ ազդելով, փոխադարձաբար պայմանաւորելով: Այն վայրերում միայն, ուր հին, փող օրդանիքը, աշխարհագրական դիրքի ու այլ պայմանների շնորհիւ, շատ թէ քիչ ենթակայ է եղել եւրոպական կապիտալի ու բաղաբարթութեան ազդեցութիւններին, դիտում ենք այսօր տնտեսութեան, արդիւնաբերութեան աւելի բարձր ձևերի սահմանափակ ներմուծումները: Աղք-կողքի ապրում են օսմանեան կայսրութեան մէջ—հին, միջին և նոր դարերը կողք-կողքի—հնադարեան ստրկութիւնը, միջնադարեան ճորտութիւնը և նոր դարեան վարձու աշխատանքի ու կապիտալիզմի սիստեմը: Մի տեղ հպարտ սուլում է շոգեմեքենան, զարգանում է գործարանային արդիւնաբերութիւնը, զարգանում է և անսուսափելի հակամարտութեան ժողատէր ու գործաւոր դասակարգերի միջև, սկիզբ է առնում պատմական կռիւր զանգածաին գործադուլներով ու տնտեսական պահանջներով,—մի այլ ծայրում, նոյնիսկ շատ մօտիկ, հէնց այդ նորածագող կապիտալիզմի՝ թիւտակ քիւրդ աւատականը բռնում է դազանկով իր դարաւոր քմահաճոյքին մատնած պարիսների նախիրները և միահեծան շահագործում է նրանց գրաստի աշխատանքը:

Ազգաբնակչութեան ճնշող մեծամասնութիւնը դեղերում է նահապետական բիրտ ու գաճաճ տնտեսութեան շրջանակներում, որը տեղ-տեղ խիւում է նոյնիսկ զուտ բնական տնտեսութեան մէջ (Naturalwirtschaft): Եւ իբրև հետեանք, իբրև հարազատ անդրադարձում այդ կացութեան, մենք տեսնում ենք, որ դասակարգային զանազան անօրոճումը ևս, կամ դասակարգերի շերտաւորութիւնը, նոյն նահապետական վիճակի մէջ է, թոյլ ու հազիւ նշմարելի: Այդպէս է մանաւանդ մահմեդական ընդհանրութեան

մէջ: Գասակարգերի այդ զանազանաւորումը (differentiation) մի տեսակ աստիճանացոյց է ժողովուրդների առաջադիմութեան, հասունութեան: Սովորաբար, որքան աւելի յետամնաց է մի հասարակութիւն, այնքան աւելի միապաղաղ, հօժօժէն է նրա կառուցւածքը, այնքան աւելի թոյլ ու տարտամ են դասակարգերի տարբերումները: Եւ ընդհակառակը: Պրօգրէսը, մարդկային յառաջխաղացութիւնը կայանում է աստիճանական զանազանաւորման մէջ, աստիճանական փոխանցումի մէջ—միապաղաղից դէպի՝ այլազանը, համատարրից դէպի բազմատարրը, հօժօժէնից դէպի հէտէրօժէնը: Եւ երբ ազգի անունով երգւող մտքի ու կորովի տիրացուները ազդակում են, թէ «ազգը կազմող բոլոր անդամները մէկ պիտի ըլլան, մէկ համոզումով ու դաւանանքով»—նրանք փարում են անցեալին, ոչ ապագային և ոչ ներկային:

Տնտեսական զարգացումը առաջ է բերում դասակարգերի շերտաւորում, իսկ այդ վերջինը ծնունդ է տալիս կուսակցութիւններին: Տնտեսութեան, դասակարգերի, կուսակցութիւնների ու դաւանանքների այդ տրամաբանական շղթայակցութիւնը քաղաքակրթութեան անհրաժեշտագոյն պահանջն է, նոյնիսկ նրանք ընդհանրակութիւնը—և ուր չը կայ այդ շղթայակցութիւնը, այնտեղ խաւար է, յետամնացութիւն, վայրենութիւն:

Մեր մահմեդական շրջապատի համար միանգամայն բնորոշ է այն հանգամանքը, որ այնտեղ չի շեշտուում կամ թէ շատ թոյլ ձևով է շեշտուում կուսակցական զանազան ազանաւորումը: Քրդերի մէջ աւելի ևս թոյլ քան թիւրքերի մէջ: Գասակարգային թոյլ շերտաւորման հետեանք, անշուշտ... Համայնքն ասես քարացել է: Սուլթանների ու զինւորական կաստայի դարաւոր տիրապետութիւնը, միացած մի անօրինակ կղերի բռնակալ հմայի հետ՝ տափակացրել են մահմեդական զանգուածներին, հաւասարեցրել են նրանց ստրկութեան ու տգիտութեան մէջ: «Ազգը», «միլլէթը» համարեա մէկ է... Բայց դա կուպիտ, մեքենական միութիւնն է, որ նոյնանում է երամականութեան: Գրանից էլ տառապում է այսօր և երկար ժամանակ դեռ կը տառապէ օսմանեան պարլամենտարիզմն ու առաջադիմութիւնը, ուր առայժմ վճռական գործօն է հանդիսանում թիւրք միապաղաղ ու երամական մեծամասնութիւնը: Այդ տեսակ միութեամբ ժողովուրդները կարող են թերևս աջողութեամբ մղել գոյութեան կռիւր, բայց ոչ քաղաքակրթութեան: Պարզ հօտային համերաշխութիւնը, ուր ծայր չեն տալիս անտառօնիզմները, հակադրութիւնները, ուր չը կայ բաղխում կարծիքների, դաւանանքների՝ սովորաբար ստեղծում է ճահիճ և միանգամայն ճիշտ է յայտարարում գերմանական փմաստութիւնը՝ «*Omne Partei kein*

*Fortschritt!*“, — առանց կուսակցութեան չը կայ պրօգրէս, չը կայ առաջխաղաղացութիւն: Այդ տեսակ մի ճահիճ է ներկայացնում, կարելի է ասել, հելլեն համայնքն ու պետութիւնը, ուր նոյնպէս «ազգը» համարեա «մ է կ է», չը կան կուսակցութիւնների ու դաւանանքների խիստ տարբերումներ, մրցակցութիւն ու սուր բաղխումներ... Եւ կեանքը լծացել է այնտեղ, մտաւոր ու կուլտուրական առաջադիմութիւնը անդամայուծել է ու հասցրել երկիրը «արգահատելի քանակութեան» աստիճանին՝ միջազգային արեօպագի մէջ... այն ժամանակ, երբ շրջապատող բաւկանեան պետութիւնները տենդային աճապարանքով վազում են արևմտեան ազգերի ետևից, իւրացնում նրանց կուլտուրայի արգասիքները և դառնում ըստամենայնի պատկառելի մեծութիւններ:

Այդպէս ուրեմն. տնտեսութիւնը—նահայեատական, ընդհանուր հասարակական կառուցւածքը — նահայետական, համարեա միապաղաղ. դասակարգային շերտաւորումները — տարտամ, անկերպարան, կուսակցական կեանքը իր սաղմնային վիճակում, — ահա թէ ինչպէս է պատկերանում մեզ իր խոշոր, տիրապետող գծերով՝ իրականութիւնը Տաճկաստանում, մասնաւորապէս ասիական թիւրքիայում, մասնաւորապէս մահմեդական զանգուածների մէջ:

Մի այդպիսի միջավայրում է, որ հայ գիտակից մտաւորականութիւնը, զինւած ժամանակակից ուսման վարժարաններով պէտք է հրապարակ իջնէ՝ ի կատար ածելու աստիճանաբար կուլտուրատար երգերի, «լուսաւորութեան կրօնի» իր պաշտօնը հանդէպ խաւար Արևելքի, — մի պաշտօն, որ նրան յաճախ յատկացրել են եւրոպացիները:

Ինչպէ՞ս պիտի կատարենք այդ հսկայական առաքելութիւնը. ինչպէ՞ս պիտի վարենք ուսման վարժարաններն ու միջազգայնութեան սրբազան կուրսը՝ նախապաշարունակներով ու բռնութեան պաշտամունքով սնւած, յղփացած այդ Արևելքում...

Մտաւորականութեամբ, արդարև, մենք աւելի հարուստ ենք, և այդ է թերևս, որ արժանացնում է մեզ կուլտուրատրեգերի պատուաւոր տիրոջոսին: Սակայն, խաւար ու յետամնաց է նաև մեր, հայկական իրականութիւնը. Համբարձումն արար, անշուշտ, նա փոքր ինչ աւելի բարձր է. կուլտուրայի ու առաջադիմութեան վերոյիշեալ ազդակները — արդիւնաբերական առևտրական կեանք, դասակարգային, կուսակցական զանազանաւորում, գաղափարական մրցում և այլն — աւելի են շեշտւում մեզ մօտ. բայց արտօնաբար, բացարձակ առումով, ի դէմս մեր ժողովրդի ահապին մեծամասնութեան, մենք ևս դեռ ապրում ենք կուլտուրայէս վերին աստիճանի աննախանձելի մի շրջան:

Բայց եթէ անգամ հայկական տնտեսութիւնը լինէր զարգացած ու բարգաւաճ, դասակարգերը աւելի զուած ու որոշուած, հողը աւելի պատրաստ դասակարգային պայքարների համար, — հայ ուսման վարժարան, առաջադէմ մտաւորականութիւնը, այնուամենայնիւ, որոշ չափով պիտի կաշկանդէր իր պրօպագանդի մէջ... Պիտի կաշկանդէր այն պատճառով որ հայութիւնը չի ներկայացնում մի գոց, ուրոյն միջավայր, ուր կարելի լինէր ազատ թռիչք տալ գաղափարներին ու պայքարներին, վազել առանց յետ նայելու, առանց զարտուղի ճանապարհների դիմելու, դէպի բարձր առաջադիմութեան ու քաղաքակրթութեան հանգրուանները, հրապարակ նետել ուսման վարժարան լոզունգներն ու գիտութեան վերջին պատկերանները, ամենասուր, ամենամաքուր, ամենացայտուն իրենց ձևերով... Պիտի կաշկանդէր այն պատճառով, որ գոյութիւն ունի վերը յիշատակած խառնափնդոր իրականութիւնը, ցեղերի ու սարբեր քաղաքակրթութիւնների այն անօրինակ շփոթը, որ բնորոշում է մասնաւորապէս թիւրքա-հայկական միջավայրը և որ չափազանց պիտի բարդացնէ յետայսօրեան մեր կուրսը՝ յանուն միջազգայնութեան ու ժողովուրդների իրաւահասարակութեան:

Հակամարտութիւնը փաստ է: Թիւրք ու քրիստոնեայ տարրերի միջև անջրպետը կայ, նա եղել է միշտ, անկախ բռնակալութեան գրգռումներից ու դաւերից: Եւ այդ դարաւոր հակամարտութիւնը եղել է, անշուշտ, այն մեծագոյն պատճառներից մինը, որի շնորհիւ «մեռած տառ» են մնացել սուլթանների այլևայլ ժամանակ արձակած ըէֆօրմային ծրագիրները — Թանզիմատ, Հատի-Հոլմայուն և այլն — ծրագիրներ, որոնք արդիւնք են եւրոպական պետութիւնների ի գործ դրած ճնշումների... Տաճկաստանը ուժեղացնելու և ռուսական հեռաւոր արշաւանքները կանխելու նպատակով: Երկու խոշոր տարրերը օսմանեան կայսրութեան մէջ — քրիստոնէութիւն ու մահմեդականութիւն — կարելի է ասել, ներկայացնում են երկու տարբեր քաղաքակրթական հակումներ: Ռամկավարական հոսանքները շեշտւում են գրեթէ բացառապէս առաջինի մէջ, այն ինչ՝ երկրորդը — մահմեդականութիւնը — իր բոլոր խաւերով, անգամ կրթւած մտաւորականութեամբ, առայժմ հզօր թուրք է կանգնած ճշմարիտ ուսման վարժարանների դէմ, չի ուզում թողլ տալ քրիստոնեաների իրաւահասարակութիւնը նրանց մուտքը քաղաքական իշխանութեան մէջ, համարելով այդ մի տեսակ ոտնձգութիւն. Իսլամի կրօնական անանդութիւնների դէմ... Բոլոր թիւրքական վերանորոգիչները սնւած են եղել այդ ճակատագրական անվստահութեամբ դէպի քրիստոնեայ տարրը և դեռ 1876 թւի միթհատեան պարլամենտում, ուր երամականութիւնը, մերենական համերաշխութիւնը հասնում էր իր ծայրագոյն աստիճանին (պատգամաւորները հլու հնազանդութեամբ ընդունում էին կառավարութեան

ամեն մի առաջարկը, «էվէթ», «այո» ազդեցիկով և դրա համար ստացել էին «էվէթուտի» ծաղրանունը) — քրիստոնեայ պատգամաւորների ներկայութեամբ, նրանց հասցէին հնչում էր նախագահի վիրաւորական ֆրազը. «քրիստոնեաները պէտք է գոհանան այն համբերողութեամբ, որ ցոյց է տրուում նրանց նկատմամբ»:

Չարագացման անիւր այսօր փոքր ինչ առաջ է գնացել, բայց նոյն անվատահոլութեան ոգին է ցոյցում, տարաբախտաբար, նաև «կենտրոնական նացիօնալիզմի» այն սիստեմի մէջ, որ հաստատուել է յուլիսեան յեղափոխութիւնից ի վեր...

Ինչպէս տնօրինել այդպիսի դժւարին հանգամանքներում մեր կուրը յանուն ճշմարիտ ռամկավարութեան ու միջազգայնութեան, — մի կուիւ, որի նպատակն է օսմանեան երկրի ճշմարիտ, իրական խաղաղութիւնը և որի գերագոյն նշանաբանն է. «Բոլոր ազգերի աշխատաւորներ — միացէք»...

Այդ կուրը սկսած է արդէն օսմանեան կայսրութեան մէջ: Նրա անունն է՝ աշխատաւորական կուր: Նա առաջ կերթայ զուգընթացաբար երկրի աստիճանական ռամկավարացման հետ, միշտ աճելով ու ծաւալելով: Հին ըէթիմի տակ նա չը կար: Խեղդած էր գասակարգերի հակամարտութիւնը, ինչպէս խեղդած էին կեանքի բոլոր արտայայտութիւնները: Բայց հէնց որ սահմանադրութիւնը ծանուցեց — բնորոշ և ուշագրաւ է այդ հանգամանքը — հէնց որ տարածեց «ազատութեան դիւթիչ արձագանքը օսմանեան տարտարոսի մէջ՝ մէկէնիմէկ գահալիժուող հեղեղների պէս պայթեցին բանւորական մասսային գործազուլները: Քրիստոնեայ ու մահմեդական ամեն կարգի աշխատաւորներ, սպարանային գործաւորներ, գրաշարներ, բեռնակիրներ, երկաթուղու և տրամվայի ծառայողներ, ծխախոտի, թղթի ու այլ գործարանների բանւորներ, հանրային պրօլետարներ — մին միւսի ետեւից, մեծ մասամբ ինքնաբերաբար, անկազմակերպ, տարերայնօրէն բանութուղ հրատարակեցին, բեռելով մի վայրկեան իրենց վրայ Եւրոպայի ուշադրութիւնը, ձգելով անակնկալի ու շարունակի սպաւորութիւնը մանաւանդ «Նրիտասարգ Թիւրքիայի» իդէօլօգների վրայ, որոնք տանեակ տարիների իրենց արեւմտեան թափառումների մէջ, դժբախտաբար, ոչինչ չեն սովորել նոր կարմիր, աշխատաւորական ինտերնացիօնալի շարժումներից և յաւակնում են անանցանելի պատնէշ դնել նրանց հանդէպ օսմանեան հայրենիքում... հակասինդիկատային ու այլ նման օրինաբծերով: Իբրև լրացումն այդ տարերային գործազուլների և իբրև նրանց ապագայ խթան՝ ահա բնուում են մին միւսի ետեւից սինդիկատները, արհեստակցական միութիւնները, որոնք կը ծաղկեն նաև «մութի» մէջ, եթէ կառավարութիւնը հետևողականօրէն գործազուլ գնալիչ օրէնքները և թոյլ չը տայ տնտե-

տական կազմակերպութիւններին՝ լոյս աշխարհ դար: Սա մի պատկառելի սկզբնաւորութիւն է, որ կունենայ, անտարակոյս, իր պատշաճ զարգացումը, համաձայն տնտեսական ընդհանուր էւլիւցիայի օրէնքներին: Շարժումը կենտրոնանում է գլխաւորապէս եւրոպական Թիւրքիայում, ուր նորագոյն արդիւնաբերութիւնը արդէն խոշոր քայլեր է արել և ուր բուլգար-մակեդոնական սօցիալիստ կազմակերպութիւնները տարիներից ի վեր մղել են միջազգայնութեան պրօպագանդը: Նոր շարժումը ընդգրկում է աշխատաւոր ընդհանրութեան դեռ մի չնչին մասնիկը, բայց տնտեսական զարգացման ու բաղաբական բարեփոխումների հետ, նա կը տարածուի և կընդհանրանայ նաև ասիական Տաճկաստանում, նաև դաշտերում, աշխատաւոր գիւղացիութեան մէջ: Մի չնչին մասնիկն է դա այն մեծ հոսանքի — աշխատաւորական կամ սօցիալիստական մեծ ինտերնացիօնալի — որ ապագայում պիտի միացնէ իր մէջ — ձուլուած ի մի անյաղթելի բանակ — երբեք հզօր գաշնակիցներ՝ հարստահարուած բանւորութիւն, հարստահարուած գիւղացիութիւն և գիտակից մտաւորականութիւն:

Ինչպէս Աւստրիայում, Ռուսաստանում և բոլոր ուրիշ երկրներում, այնպէս և մեզ մօտ, այդ հոսանքը միակ էական գրաւականն է ազգերի ու ցեղերի անկեղծ, անխարդախ մերձեցման, միակ յարատև շաղախը ազգամիջեան համերաշխութեան:

Աշխատաւոր լէգէօնների շահերի բնական եղբայրակցութիւնը պէտք է աճի՝ զուգընթաց արեւան եղբայրութեան հետ: Գասակարգերի խաղաղ պայքարը պէտք է փոխարինէ նաև Թիւրքիայում, ազգերի արիւնոտ բաղխումներին: Իբր նրա ծնունդ աշխատաւորական ինտերնացիօնալի իր գիրկը կը բաշէ մահմեդական աշխատաւորների գէթ փոքրիկ մասը, երբ նա կը գրաւէ նաև մի համեստ հատուածը Թիւրքական մտաւորականութեան — այն ժամանակ այլևս դժւար կը լինի յետադէմ տարրերի համար՝ դաւել այս կամ այն ժողովրդի դէմ, խառնել, պղտորել ազգամիջեան յարաբերութիւնները:

Բոլոր ազգերի ճնշումներն ու կեղեքումները — բոլոր ազգերի ճնշողների ու կեղեքողների դէմ... Միջազգայնութեան գաղափարը իր նորագոյն իմաստով հիմնուած է տնտեսական հաւասարութեան պահանջի վրայ: Չը կայ մարդկանց իսկական հաւասարութիւն ու եղբայրութիւն, քանի դեռ չը կայ այդ տնտեսական հաւասարութիւնը, քանի դեռ ազգերի ճնշող մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր մասսաները կը մնան լծի տակ կորացած, իրենց օրական պահէնը հայթայթելու անողորմ անհրաժեշտութեան մէջ: Յանուն այդ հաւասարութեան, յանուն այդ միջազգայնութեան՝ պէտք է այժմից իսկ կատարել բաղձալի



զան ազան աւորումը վերածննդը Տաճկաստանում... Իդէալը, աւաղ, իր լիակատար իրականացմամբ դեռ հեռու է. նա հեռու է նոյնիսկ առաջագէմ ազգերի համար: Բայց այդ իդէալը բեկոր-բեկոր իրագործելու է սյոժմից արդէն:

Այժմից արդէն հայ դեմոկրատ, գաղափարական մտաւորականութիւնը պիտի դիրք բռնէ նոր սկսող շարժման հանդէպ: Ամ կապիտալի ու շահագործման հեղինակէմ աշխատանքի և ժողովրդի, կամ թէ այդ վերջինի հետ՝ ընդդէմ կապիտալի և ամեն տեսակ առանձնաշնորհումների:

Ինչպէ՞ս է, սակայն, պատկերանում մեզ՝ բուն դործնական շարժման հողը մեր յատուկ միջավայրում, թիւրքաց հայաստանի մէջ: Ինչպէ՞ս զուգարբել երկու անհրաժեշտ ու լրացուցիչ գաղափարները—ազգայնականութիւն և միջազգայնականութիւն: Ինչպէ՞ս հաշտեցնել մեր հայկական ազգայնական դատը՝ բոլոր ճնշւածներին ներկայի դատի հետ...

Պատասխանը մասամբ արդէն տրւած է նախընթաց պատճառաբանութեան մէջ: Բայց փորձենք մի քիչ աւելի խորացնել այն:

## Թ Ի Ի Ր Ք Ի Ա

### Ա Ր Տ Ա Գ Ա Ղ Թ Ը

Լուրերը հետզհետէ կը խտանան, որպէս հսկայական ահազնադանգ և կը գուժեն մեծ աղէտը—աւելի մեծ քան 95-ի ջարդերը, աւելի ահաւոր քան Ադանայի սարսափները—ընդհանուր արտագաղթի սպանիչ տրամադրութիւնը: Եւ քանի մը գաւառներէն խմբերով չեն լր ալիքաձև տարածւելով դէպի հայաբնակ վայրերու ամեն մէկ խուլ անկիւն՝ երկիրդի ու սարսափի դռներ կը բանայ ամենուրեք: Ծայր յուսահատութիւնը գալիք օրերու նկատմամբ իբր մղձաւանջ կը ծանրանայ ամենքի կրծքին. բոլոր աղէտարշ հառաչանքները՝ միացած անստոյգ մթնոլորտին՝ սովի, կոտորածի, լլկումի, գրացու երկրի մի լեզուի և օդի մէջ պտտող անխօս շշուկի ու սպառնալիքի քօսօսին՝ սկիզբը որքան կցկտուր, տարտամ, վերջը նոյնչափ ձեւաւորւած՝ արհաւիրտ յանկերգը կը դառնայ, յուսահատին յատուկ յանկերգը—գաղթ, գաղթ:

Այդ տխուր յանկերգը ծայր կ'առնէ հայկական բարձր ձիւնագագաթներէն մինչև Մուշի հովիտները, Սասունի ըմբոստ ծերպերը, հպարտ Քր-Քր քարը, Փոքր-Հայրի մարուր աղբիւրները, մինչև Կիլիկիոյ արևնաներկ գաշաբեր ու Տաւրոսի անտիկները:

Ընդհանուր ճիչի մը մէջ, գաղթի արձագանքը կը թռչի շտապ դէպի Եւրոպա, Եգիպտոս, Ամերիկա, մինչև Արժանութիւնի հասարակապետութիւնը, ուր զարնւելով, անհիւրընկալ ապանաժներուն, այս նիւթական դարու չոր-եսական սրտին ու գահավիժւելով կ'ընկրկի

կորագլուխ՝ դէպի ետ, դէպի զուլումի աշխարհը, դէպի յուսահատները, զանոնք պահ մը շարեցնելու տարուբերելու աննպատակ սին երազներով իրենց օրրանին մէջ, որ յետոյ նորէն ուժեղ բռնկումով մը, աւելի անզուսպ, աւելի վճռական, մռնչէ ամբողջ աշխարհին—դէպի դուրս, հեռուն, դէպի ամեն տեղ, երբէք հայրենիք:

Ժողովրդական հոգեբանութեան այս ցաւագար դրութիւնը հասկանալի է: Խորհող միտքը որքան և արևնտուրի դժբախտ իրականութեան ելեւէջներու հանդէպ, այդ բոլորը բացատրելու մեղմացուցիչ հանգամանքներուն—ամբոխն է այդ, որ առօրեայ վտանգի ըրպէսին պաղարիւն դատելու, ուղիղ կշռելու անընդունակ կը դառնայ: Արիւնի հանդէպ անոր տեսութեան հօրիզոնը կը կորսնցնէ ջինջ գոյները, պահելով գորշ մշուշ միայն, որի մէջ ոչ մէկ լուսատու գիծ չի գտներ: Ամբոխային մտածմունքն է այդ: Բայց երբ մայրաքաղաքը նստած ժողովրդական տրամադրութիւնը ղեկավարողները, մամուլի ներկայացուցիչներն են այդ թիւրիմացութեան մէջ ընկնողները, երբ անոնք մէկ յօգւածով գաղթը կը պարսուեն և միևսով կը քաջալերեն, այդ արդէն աւելի քան յուսահատական է: Եւ ցաւալի է որ յեղափոխական օրգանը ստիպւած է ոչ միայն ժողովրդական հոգեբանութեան սխալ մօտեցումները հրապարակ հանել, այլ և այն մամուլի, որ ժողովրդի մտաւոր մակարդակէն բարձր չի խոյանար և յաճախ անոր սխալները կը կրկնէ: Եւ ո՞վ կարող է ըսել, թէ թերթի մը քաջալեր մէկ տողը գաղթի նկատմամբ ժողովրդական յուսահատութիւնն ու գաղթի տրամադրութիւնը իր գրգռումին չի հասցներ: Ժողովրդական ամեն մէկ սխալ քայլ ունի իր բացատրութիւնը, բայց մամուլի սխալը աններելի է:

Գուցէ ոմանք ուզեն այդ վարմունքը արդարացնել, բացատրելով թէ գաղթի ջատագովը՝ մամուլի մէջ ըսպառնալիք մըն է կառավարութեան, զայն զգաստացնելու, սթափեցնելու, իր երկիրը շինարար ժողովրդէ մը թափուր դարձնելու հեռանկարը անոր ցուցադրելով, բայց այդ մտածմունքն իսկ շատ է թեթև:

Ըսել մամուլի մէջ թէ հրապարակագրի ձայնը անզօր է կասեցնել մի հոսանք, որ հետևանք է կեանքի վատթար պայմաններու, անստոյգ ապագայի, թէ կանչն ու յորդորը դատարկ ձայներ են այնտեղ, ուր ժողովրդական տրամաբանութիւնը կը թելադրէ հակառակը, կը նշանակէ չըմբռնել հրապարակախօսութեան այն մեծ դերը, որ ան կը խաղայ այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհին մէջ, կը նշանակէ ուրանալ անոր կշիռը և նշանակութիւնը: «Մամուլը 6-րդ պետութիւնն է» խօսքը դատարկ Փրազ չէ գեղեցկախօսութեան համար արտայայտւած:

Պօլսոյ հայ մամուլն էր, որ այնչափ աղմուկ բարձրացուց Ադանա հրատարակող «Իթիտալ» թերթի և անոր խմբագիր Հասան Ֆիքրիի դէմ, լաւ ըմբռնելով թէ որչափ ազդեցիկ դեր կը խաղայ մամուլը ժողովրդի հոգեբանութեան վրայ, զայն, դէպի ոճիր առաջնորդելու սև գործին մէջ:

Պօլսոյ ներկայ միսիստրական տագնապը—Նորատունկեան հարցին մէջ—միայն և միայն «Թանինի» յօդուածներով կը բացատրուի:

Այս օրինակները բաւական են մի ըրպէ մտածել տալու մի շարք հայ հրապարակագիրներուն՝ գրելէ

առանց ձանձնալ գրչի ուժը և ըստ այնմ արծարծել մի գերագոյն կարևոր խնդիր, ինչպիսին է արտագաղթը: Խօսել արտագաղթի մասին այնպէս, ինչպէս երբեմն կ'արձանագրեն հատուածական պանդըխտութեան, ժամանակաւոր տարագնացութեան մասին, դրւագել Ամերիկա պանդխտած հայ երիտասարդներուն կորովն ու ջանքը՝ իրենց ապրուստը հայթայթելէ զատ, հեռաւոր հայրենիքի մէջ իրենց ծնողներուն նիւթական նպաստ հասցնելն ու անկէ եզրակացութիւն—թէ ընդհանուր արտագաղթն ևս մի առանձին կորուստ չէ հայութեան համար, սա արդէն ողջմտութեան բացասումն է:

Ամբողջ մի ժողովուրդ տեղահան ընել իր հայրենիքէն և տանել թէկուզ ամենաներջանիկ մէկ աշխարհ, ուր թէ բնութիւնը և թէ դրացիները մեզ ժպտային անկեղծ ու անխարդախ ժպիտով, ի՞նչը կերաշխաւորէր մեզ թէ այդ ժողովուրդը կը մնար նոյնը առանց վտանգելու իր էականը—իբր ինքնատիպ հայութիւն:

Եւ շատ տարօրինակ պիտի ըլլար, եթէ տեսնէինք բոլոր հայերը միասին գաղթած Ալիկեան սարսափներէն վերջ մինչ նոյն հայութիւնը իր գերագանց մեծամասնութեամբ այդ սխալ ճամբան բռնել չը մտածեց 95-ի ընդհանուր ջարդերէն անմիջապէս յետոյ, որ իր հետևանքներով շատ աւելի աղէտաբեր էր:

Հրապարակագիրներէն ոմանց այսօրայ վայնասունն ու արտագաղթը ներող յօդուածները մեզ ենթադրել կուտան, որ եթէ 95-ին նոյնչափ ազատ մամուլ ըլլար Թիւրքիոյ մէջ, ինչպէս վերջերս էր, ինքնաբերաբար գաղթել չուզող հայ ժողովուրդը մեր հրապարակագիրները իրենց ձախաւեր պրօպագանդով մինչև այժմ ինպա՞ռ գաղթեցուցած պիտի ըլլային—իրենց երեւակայութեան մէջ—այնչափ մեծ պիտի ըլլար արտագաղթի կոչը անոնց կողմէն:

Ժողովրդական բնազդը, ոչ աւօրեայ գոյութեան բնազդը, այլ անոր արագայ բարօրութեան, շատ հեռուէն, շատ արագայէն կը խօսէ նոյն ժողովրդի սրտին:

Հայ ժողովուրդը անյիշատակ ժամանակներէն շատ սուղ գնով ու յիշատակներով է կապած իր հողի հետ, շատ աւելի վայրենի ցեղեր ու ժողովուրդներ է անցուցեր իր կեանքի կամուրջով և ամեն անգամ իր յամառ դիմացկանութեամբ նորէն ուժ է աւեր ուրիշ աղէտ մը—աւելի վայրագ ու կոպիտ—գիմագրաւելու աստիճան:

Ան շատ է կոպիտ, կարծածէն շատ աւելի անոր հոգին շատ է մարզեր երևակայածէն ալ աւելի՝ զգալու և համոզելու համար թէ, ինքը դեռ ապրելու է աւելի երկար ու աւելի բեղմնաւոր կեանք քան ո՞՞րք, որի մէկ տխուր ժեստը այսօր կը սարսափեցնէ հայ «հրապարակագիրը»:

**Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ի Թ Ի Ի Ն**

Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Գ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ

III

Միլիտարիզմը, այդպիսով, չարիք է նոյնքան ն երբ ին, որքան և արտաքին խաղաղութեան համար: Նա աւերում է ժողովուրդների անտեսութիւնը, հարւածում է ամենաաղքատ, աշխատաւոր խաւերին, որոնք

առանց այն էլ տնքում են ամենուրեք բիւրօկրատական, կապիտալիստական, վաշխառուական ու այլ ձևի հարստահարութեան տակ: Զօրքերի ու նաւատորմերի բիւջէն բոլոր խոշոր պետութիւնների մէջ կազմում է սովորաբար ընդհանուր բիւջէի ծանրութեան կենտրոնը: Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի պէս պետութիւնները առայժմ դեռ կարողանում են դիմանալ կանգուն բանակների ու յարածուն զինաւորութեան ծախքերին, քանի որ այդ երկիրները համեմատաբար հարուստ են, արդիւնաբերութիւնը ճոխ ու արգասաւոր և ազգային բարօրութեան ընդհանուր մակերևոյթը համեմատաբար բարձր: Այնուամենայնիւ, նոյնիսկ այդ հարուստ պետութիւնների մէջ, աշխատաւոր ընդհանրութիւնը չարաչար տուժում է միլիտարիզմի ծայրայեղութիւններից: ապացոյց՝ հակամիլիտարական այն ահագին հոսանքը, որ ստեղծել է այդ երկիրներում և որի առջև ժողովուրդների հրամանատարները վաղ թէ ուշ ըստիպած կը լինեն գլուխ խոնարհեցնել:

Որքան աւելի զգալի է միլիտարիզմի աւերածը անտեսապէս ու կուլտուրապէս յետամնաց երկիրներում: Քանի՞ անգամ Իտալիայի, Սպանիայի ժողովուրդները արիւնալի ընդվզումներով փորձել են մեղմացնել այդ պատուհասը... Իե՞ռ երէկ հերոսական Ատալոնը, որպէս մէկ մարդ, ծառայել էր հայրենի դաւաճան կառավարութեան դէմ, որ ի հաշիւ իր ժողովրդի ստրկութեան ու տառապանքների մղում էր ամօթալի պատերազմներ ֆրիկական Մարօկկոյում: Առայժմ, աւա՜ղ, այդ ազնիւ ըմբոստացումները խեղդուում են ժողովրդական արեան մէջ—նոյն բթացած ու կամազուրկ զինուորների բազուկներով—բայց կը գայ ժամանակ, երբ աշխատաւոր զանգաւածների մի ժեստը միայն բաւական կը լինի՝ ժողովրդասպան պատերազմները արգելելու, կանխելու...

Իտալիայից և Սպանիայից յետոյ—Ռուսաստանը և Թիւրքիան: Թէ որքան ծանր է միլիտարիզմի բեռը ցարերի կայսրութեան մէջ, երևում է պետական բիւջէից, նրա բաշխումից: 1906 թւի վիճակագրութեան համեմատ՝ զօրքի ու նաւատորմի վրայ ծախսում է մօտ 500 միլիոն ռուբլի: մի գումար, որ կազմում է ընդհանուր բիւջէի քառորդը: Գե՞ռ այդքանով ի հարկէ, չեն սահմանափակում ռուս ժողովրդի անտեսական զոհաբերութիւնները՝ միլիտարական խորանին: Հաշուեցէք, թէ որքան բեղուն արգասաւոր աշխատանք են կորցնում այդ միլիոնաւոր ժիր ու առողջ երիտասարդները, որոնք ծաղիկ հասակի մէջ խլում են իրենց չքաւոր ընտանիքներից...

Զինաւորութեան խելագար ծախքերը «սխմում են», բնականաբար այդ թշուառ երկրների զուտ կուլտուրական պէտքերը և նախ և առաջ՝ լուսաւորութեան գործը, դպրոցները, գրագիտութիւնը: Մխմում են նրանք թէ կառավարութիւնների և թէ նոյնիսկ աշխատաւոր ազգաբնակչութեան կողմից: Իրենց անծայր խեղճութեան մէջ ժողովրդային զանգաւածները այդ երկիրներում ոչ մի հնարաւորութիւն չունին հոգալու իրենց զաւակների ուսման պէտքերը, և մենք տեսնում ենք, որ եւրոպական պետութիւնների շարքում, Թիւրքիայից ու Ռուսաստանից յետոյ, Իտալիան այն երկիրն է, ուր տգի-

տուութիւնն ու անգրագիտութիւնը շեշտուած են ամենասահմանի չափերով \*):

Աւերիչ՝ անտեսութեան համար, աւերիչ՝ կուլտուրայի ու մտաւոր առաջադիմութեան համար, մշտնջենական սպառնալիք՝ ներքին ու արտաքին խաղաղութեան համար:

Ներքին խաղաղութիւնը վտանգուած է ոչ միայն զինուորական միջամտութիւններով՝ կապիտալի ու աշխատանքի պայքարի. ոչ միայն միլիտարիզմը իր կանգուն բանակներով և կաստային զօրասիստեմով պատրաստ է միշտ միջամտելու աշխատաւորական, գործադուլային ու այլ տեսակ շարժումների մէջ, ոչ միայն նա պատրաստ է միշտ ճնշել ու ջարդել աշխատաւորին ի նպաստ կապիտալի ու գործատիրոջ, այլև նա միշտ ընդունակ է քաղաքական պատուհասներ բերել ժողովրդի գլխին, սահմանել «պետական հարւածներ» (coup d'état) ու վերիվայրումներ... յօգուտ, ի հարկէ, ոչ ժողովրդի, ոչ աշխատող ու տառապող ընդհանրութեան, այլ յօգուտ մի արտօնեալ փոքրամասնութեան, մի կաստի, դասակարգի...

Դա մի իրական սպառնալիք է, որ կապած է միլիտարիզմի էութեան հետ: Ֆրանսիական պատմութեան վերջին տասնամեակը պերճախօս կերպով ցոյց տւեց այդ: Տեսանք դրէյֆուսեան փոթորկալի դատի միջոցին, թէ ինչպէս զինուորական բարձր առաջնորդները, գրեթէ ամբողջ սպայակոյտը (état-major), վարակւած մինչև ուղ ու ծուծ յետադիմական գաղափարներով, թե և քաղին հակահանրապետական խաթմուտին—կղերականներին, նացիօնալիստներին ու արքայականներին—կուռմէր ազատութեան ու արդարութեան դէմ, ցինիկօրէն դըրժուած էր Ֆրանսիայի լաւագոյն աւանդութիւնները և պատրաստ էր ենթարկելու հանրապետութիւնը ամենասահմանօր փորձութիւններին:

Չարիք—ըստ ամենայնի...

Ինչպէ՞ս դարձանել... Ինչպէ՞ս վերացնել, կամ գէթ մասամբ թեթեւացնել ժողովուրդների մէջքի, սրտի և ուղեղի վրայ ծանրացած այդ սարսափելի բեռը: Ի՞նչ միջոցով կարելի է կանխել պատերազմները և սահմանափակել զինուորումի այդ համաձարակ ու կատաղի տենդը: Սա ամենացաւոտ ու առաջնակարգ կնճիռներից մինն է, որ զբաղեցնում է քաղաքակիրթ մարդկութիւնը:

Երկու լուծում կայ:

Մէկը գալիս է «բարձր», իշխող դասակարգերից: Միւսը գալիս է ժողովրդից և նրա պաշտպան անվաճարական կուսակցութիւններից:

Առաջինը ձգտում է գլուխ բերել ընդհանուր զին ըն կ ե ց ու թ իւ ն (desarmement) կամ զինաւորման սահմանափակում միջազգային համաձայնութեամբ, իրաւախոհութեամբ: Այդ ձգտումը ստացաւ մի տեսակ պաշտօնական նւիրագործում 1899 թւին,

\*) Մի փոքրիկ աղիւսակ. Եվէյցարիայում ամեն մի 1000 բնակիչներից ընդամենը 6-ը ա ն գ ր ա գ է ս յ են, Գերմանիայում 1000-ից 21, Անգլիայում 24, Ֆրանսիայում 35, Աւստրիայում 327, Իսպանիայում 1000-ից 529 անգրագէտ են: Ձեռքի սակ չունիմ Ռուսաստանի բւերը, բայց յամենայն դէպս նրանք suis աւելի խոտը են, ևան Իսպանիայից: Թիւրքիոյ մասին խօսել իսկ չարժէ:

երբ աշխարհի ամենահզօր ինքնակալներէից մինը, Նիկօլա II հրատարակեց իր արտառոց մանիֆեստը համաշխարհային զինաթափութեան մասին: Տեղի ունեցաւ Հաագի պատմական խորհրդաժողովը: Պետութիւնները ի դէմս իրենց ամենաձեռնհաս ներկայացուցիչների, գումարեցին Հօլլանդիայի մայրաքաղաքում և ամիսներ շարունակ խորհեցին: Արդի՞ւնքը... Հէնց նոյն տարւայ մէջ պայթեց անգլո-տրանսվալիան պատերազմը... Իսկ մի քանի տարի յետոյ՝ կեղծութեան գլուխ-գործոցը մերկացաւ իր բովանդակ այլանդակութեամբ սեփական միջավայրում, նոյն իրեն նախաձեռնողի մօտ... Առաջ եկաւ ռուս-եպպօնական պատերազմը...

Աշխարհը տեսաւ, որ խաղաղասիրութեան ու միջազգային համերաշխութեան անունով խաղացուած է մի անարժան կատակերգութիւն, որ այդ տեսակ բանակցութիւններով պատերազմները չեն վերանայ, զինուորումները չեն նւազի, միլիտարիզմը չի թուլանայ: Ընդհակառակը՝ «բարեկամական», մեղմանոյշ զրոյցներից յետոյ իւրաքանչիւրը շարունակուած է աճեցնել ծովի ու ցամաքի իր ուժերը: Անգլո-գերմանական հակամարտութիւնը մի նշանախեց անգամ չը պակասեց Հաագի երկու կօնգրէսներից յետոյ, ընդհակառակը՝ աւելի թափ առաւ, և այսօր երկու ախոյեանները կատաղօրէն մրցում են իրար հետ՝ զրահանաւերի շինութեան մէջ... որովհետեւ գերմանական բուրժուա ու ֆէօդալ դասակարգերին հաճելի է ծաւալել իրենց տիրապետութիւնը տիեզերական ջրերի վրայ, համաձայն կայգէրի ռազմակոչին. «Usere Zukunft auf dem Wasser!» (Մեր ապագան ջրերի վրայ է) և որովհետեւ միւս կողմից էլ Անգլիային ցանկալի է անխախտ պահել «ծովերի միահեծան թագուհու» իր պատմական, տիեզերական հմայքը:

Ուրիշ հակամարտութիւնները ևս չը թուլացան Հաագից յետոյ, այլ միայն շեշտուեցին. բռնակալների և պրօֆէսիօնալ դիւանագէտների բերնով հռչակուած խաղաղութիւնը աւագի վրայ կառուցուած մի շէնք էր, խարխուղ ու երերուն. նա ամեն վայրկեան պատրաստ է փլել:

Կայ և բուրժուա-ռամկավարական խաղաղասէրների ընդհանրապէս համակրելի տարրը, որ բոլոր երկրներում եռանդով պրօպագանդ է մղում խաղաղութեան ու ազգերի համերաշխութեան մասին, ունի իր տարեկան համագումարները, իր մամուլը, ունի և կենտրոնական միջազգային իր բիւրօն Եվէյցարիայի Բերն քաղաքում: Ինքնին օգտակար ու համակրելի մի հաստատութիւն, որ բարոզում է, երբեմն նոյնիսկ աջողեցնում է միջպետական մանր կնճիռների խաղաղ հարթումը իրաւարար ատեանների միջոցով, սակայն, ազգու և վճռական գործօնի դեր միլիտարիզմի ցաւոտ հարցերում՝ չի կարող խաղալ նաև այդ անպաշտօն, բուրժուա-ռամկավար խաղաղասէրների ինտերնացիօնալը:

Երկրորդ լուծումը—բուն ու մ կ ա վ ա ր ա կ ա ն ն է: Նրա միջիօնաւոր կողմնակիցների մէջ կան, ի հարկէ, բուրժուալիայի ձախակողմեան, դեմօկրատ տարրերից, բայց նրա հզօր ու հետևողական փաստաբանն են բոլոր երկրներում՝ սօցիալիստական կուսակցութիւնները, Միջազգային Աշխատաւորական Միութիւնը— Ի ն տ ե ր ն ա ց ր օ ն ա լ ը: Վերջինը այնքան արդէն ուժեղ է իր թւով ու ազդեցութեամբ, որ այժմից իսկ կարողանում



է զգացնել տալ իր թափը միջազգային բարդութիւններու կշռի վրայ, կարողանում է երբեմն—իր կորովի սպանալիքներով, պարլամենտական միջամտութիւններով ու հրապարակական զանգաւածային ցոյցերով—արգելք լինել պատերազմներին: Փրանսիական սօցիալիզմն էր, որ վերջին երկու տարւոյ ընթացքում, Մարտիկոյի ճգնաժամի միջոցին, զսպեց հայրենի կառավարութեան և ռազմատենչ բուրժուազիայի ակորթակները, յուզեց շարունակ հասարակական կարծիքը և կանխեց շատ արիւնայի արկածներ: Եւ երբ անցեալ տարւոյ ընթացքում, անգլո-գերմանական յարաբերութիւնները հասել էին հակամարտութեան ու լարման դադարակէտին, երբ միջնորարը ելեբարականացել էր և սոգորել պատերազմի յամառ շուկներով դարձեալ սօցիալիստ կուսակցութիւններն էին, որ հնչեցրին ամենաազգու «հաւաճը» երկու երկրներում. անգլիական սօցիալիստները փոխադրեցին Բերլին, գերմանական սօցիալիստները իրենց հերթին գնացին Լոնդոն և երկու մարտաբարձներում կատարեալ թափօրների, սօցիալիստական անգլո-գերման եղբայրակցութեան ցոյցերի մէջ՝ կառավարութիւնները նշմարեցին աշխատանքի զանգաւածների հրահանգիչ սպանալիքը...

Ինչ ահաւոր նախազգուշացումն էր նոյն բուրժուա ու աւատական դասակարգերի ու կառավարութիւնների համար՝ Սպանիայի, Ատալոնի վերջին ցնցող անակնկալը... Այդ հազարաւոր ապստամբները, որոնք բողոքելով շղթայազերծած պատերազմի դէմ, պարզում էին ընդհանուր գործադուլի ու սօցիալական ազատագրութեան կարմիր դրօշը, գնում էին գնդակների տարափի տակ քանդելու բռնակալութեան, կղերի ու բուրժուազիայի պատւարները—դա «պարիզեան Կոմունայից»՝ յետոյ ամենածանր, ամենաարհաւիր դասն է որ չի կարող մտածել չը տալ աշխարհի ռազմասէր հրամանատարներին...

Բոլոր «խաղաղասէր» հոսանքներից սօցիալիզմը ամենախրականն ու զօրաւորն է, բոլոր դիմադրական հատուածների շարքում՝ սօցիալիստական կուսակցութիւնը ամենաազգուն է միջազգային քաղաքականութեան ծանրակշիւ խնդիրների մէջ, որովհետեւ նա ունի իր ետևում անձնազոհ մարտնչողների բազմամիլիոն զանգաւածներ, որոնք կարող են պատերազմի միջոցին մի օր վերջապէս, ծանանալ յաղթանակնօրէն ժողովրդի բոլոր այլազան ոտխների դէմ և խաւարեցնել միանգամ ընդմիշտ բռնակալութեան ու կապիտալիզմի արեգակը...

Ինչ է քարոզում այդ հոսանքը միլիտարիզմի դէմ. Նա դաւանում է այն համոզումը, որ պատերազմը ժամանակակից քաղաքակրթութեան մէջ բղխում է կապիտալիզմի ընթացքից, որ միջազգային բարդութիւններին սովորաբար խթան են լինում իշխող դրամատէր դասակարգերը, որոնք ձգտում են միշտ նորանոր հողեր գրաւել երկրագնդի խուլ ու խոպան անկիւններում, ձգտում են ըստ կարելոյն ընդլայնել իրենց «գաղութային» տիրապետութիւնը, որպէսզի հնար ունենան արտահանելու, սպառելու իրենց յարաձուն արդիւնաբերութեան լեռնացած արդիւնքները:

Պատերազմը կապիտալիզմի անբաժան ստւերն է և կը վերանայ վերջնականապէս միայն այն ժամանակ, երբ կը փլատակւի կապիտալիզմի բովանդակ շէնքը՝ երբ

մասնաւոր սեփականութեան ու դասակարգերի անհետացման հետ՝ կանհետանան ժամանակակից հասարակութեան բոլոր ազդակող անիրաւութիւնները:

Այդ համոզումը, սակայն, չի թելադրում իր դաւաւնողներին՝ սպասել ձեռնածալ, կրաւորական դերքի մէջ մինչև կապիտալիզմի փլատակումը: Նրանք կուտում են պատերազմի ու միլիտարիզմի դէմ այժմից ի սկզբանէ ձգտում են—արդէն ներկայ բուրժուազական կարգերի մէջ—մտցնելու, իրագործելու այնպիսի հիմնական բարենորոգումներ, որոնք պէտք է առաջնորդեն, որպէս անհրաժեշտ հանգրուաններ, դէպի ճշմարիտ միջազգային խաղաղութիւն ու համերաշխութիւն:

Սօցիալիստները այժմից արդէն չեն պահանջում ագրարի զինաթափում: Նրանք ուսուպիստ երազողներ չեն, անիրագործելի ցնորքների ետևից ընկած. նրանք ընտրիստ, իրապաշտ մարդիկ են, որ փնտրում են իրագործելի: Նրանք գիտեն յարմարել ժամանակի ու տարածութեան պահանջներին, գիտեն որոշ չափով համակերպել իրականութեան անողորմ անհրաժեշտութիւններին:

Իրականութիւնը, աւաղ, դեռ հեռու է այն ոսկէ դարից, երբ գայլն ու գաւը մէկտեղ կ'արածեն, երբ մարդ-գայլերը կարող են ապրել իրենց նմանների հետ խաղաղ դրացիական կենցաղի մէջ, առանց իրարու հետապնդելու և բզկտելու: Իրականութիւնը — անգամ քաղաքակրթ, ամենաառաջադէմ իրականութիւնը — տակաւին լեցուն է յոռի, մարդասպան, պատերազմատենչ բնազդներով, որոնց հանդէպ խաղաղասէր ժողովուրդները, պիտի մնան միշտ զգաստ ու աշխուրջ հսկողի դիրքում, եթէ չեն ուզում անդունդ գնալ և անդունդ գլորել քաղաքակրթութեան բովանդակ շէնքը: Ոչ, ազգերը չը պէտք է զինաթափուին: Գարշելով հանդերձ ժողովրդանպաստ պատերազմներից, ատելով հանդերձ վառօդի հոտը, ժամանակակից ռազմակալութիւնը, սօցիալիզմը պատրաստ են, այնուամենայնիւ, սպառազինած կուլի դաշտ՝ ելնել, հէնց որ ծայր կը տայ հօրիզոններից աշխարհակալող ու բռնաւոր պատերազմի ուրակները, հէնց որ խաղաղ, կուլտուրական հայրենիք կենթարկւի յարձակման վտանգի:

Ժողովուրդները չը պէտք է զինաթափուին, եւ ինչ է անգէն ժողովուրդը ժամանակակից աշխարհում: Մի ողբալի փալաս, մի անձար ու զգւելի խամաճիկ, որին բռնաւորները—գրսից կամ ներսից—կարող են միշտ թելադրել իրենց անսանձ բնահաճոյքը:

Ահ, երանի, բոլոր ազգերը, բոլոր մանր կուլտուրական համայնքները վաղուց արդէն, իրենց գոյութեան խանձարուրից իսկ իւրացնէին ճակատագրի այդ անողորմ հրամայականը, երանի՜ թէ ըմբռնէին նրանք իսկզբանէ աշխարհի հզօր, արիւնապարտ այն օրէնքը, որի համեմատ Ուժը, բիրտ, կոպիտ ուժը քայլում է միշտ Իր աւուրի առջև, պայմանաւորում է այդ Իրաւունքի առաջխաղացութիւնն ու յաղթանակները և հաղորդում է ժողովուրդներին այն անհրաժեշտ փայլն ու հմայքը, առանց որոնց՝ նրանք տեղ չունին, տարաբախտաբար, աշխարհի ճոխ ու լիառատ սեղանի շուրջը...

ԵՐԿՈՒ ՅԻՍՆԱՍԵԱԿ

Տասնիններորդ դարի ամենանշանաւոր ու ամենարտառուչ քաղաքական վիպերգութեան—Իտալիայի ազատութեան— տօնն է տօնուում: Չքնաղ արտայայտութիւնը այն մեծ, տիեզերական գաղափարների, որոնք ծնունդ առան տասնութերորդ դարի վերջում և որոնք մի գեղեցիկ ծաւալումով լցրին տասնիններորդ դարը ամբողջապէս:

Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան կտակած սկզբունքները խաղաղութեամբ ու հանդարտիկ ընթացքով չէին իրագործուում: Եւրոպայի մէջ Պահպանողականութեան և բռնակալութեան վատթարագոյն ներկայացուցիչները միացան Աւստրիայի մայրաքաղաքում և կազմեցին նոյնվեայ «Սրբազան Գաշնակցութիւնը», որի միակ նպատակն էր ճնշել ազատութեան և արդարութեան ամեն ազնիւ ճիգը, ամեն վեհանձն շունչ: Գաղանացած Մետերնիխի բերանով Իտալիան լոկ «աշխարհագրական անուն» յայտարարեց. կռիւ սկսեց բոլոր այն ժողովուրդների դէմ, որոնք հաւատարիմ պատմական Մեծ Իրողութեանն աւանդած ներշնչումներին: չէին կարող ու չէին կամենում հանդուրժել «վատ հովիւների» լուծը...

Ազգութիւնները՝ ազգաւոր և իմաստակ արհամարհանքի ենթարկւեցին. ազգային, ցեղային, լեզուական բոլոր կապերը ամենավայրագ հայածանքի առարկայ դարձան: Պետութիւնների քաղաքական և իրաւական սահմանները գծեցին «վատ հովիւները» անգիտացան ազգագրական համախմբումների տեսակէտը և առաջ տարան մի ցաւագար ու ասպնջ եռանդով «Եւրոպական հաւասարակշռութեան» վտանգաւոր ու բռնաբարոյ քաղաքականութիւնը: Ազգերը — գերմանացի փիլիսոփայ Ֆիխտեի պատկերաւոր արտայայտութեամբ — հասարակ իրեր դիտւեցին և նետւեցին կշեռքի այս կամ այն նժարը «Եւրոպական հաւասարակշիւր» գոյացնելու համար:

Այս տարորինակ և վատառողջ հասկացողութեան զոհ դարձաւ նաև Ի տ ա լ ի ա ն՝ տկամայ ենթարկւելով Հաբսբուրգեանների անիրաւ տիրապետութեան: Մետերնիխի դիւային խելքը աւելի անարգական ու աւելի խայտառակ իրողութիւն չէր կարող ստեղծել...

Ազգերը ընդհանրապէս և Իտալիան մասնաւորաբար չկամեցան, սակայն, հաշտել «Սրբազան Գաշնակցութեան» դժնդակ արարքի հետ: Եւ սկսեց գեղեցիկ ու երազական պայքարը ժ ո ղ ո Վ ու ը ը ն ե ռ ի և կ ա ու ա վ ա ը ու լ թ ի ւ ն ն ե ռ ի միջև: Ծաւալեց հերոսական ու յուզիչ ձախտամարտը բռնաբարւած ազգութիւնների և բռնակալ պետութիւնների միջև...

Հասարակութեան աւելի գիտակից, աւելի զգայուն և աւելի գաղափարական տարրերը հիմք դրին մի առաքինի և վսեմ գործունէութեան, որ առաջ էր տարուում գաղտնի ընկերակցութիւնների մէջ՝ որ տալիս էր բազմաթիւ օրինակներ ազնիւ ըմբոստութեան ու վեհ զայրոյթի... Իտալիան, գեղեցիկ, սքանչելի մնացորդը հռոմէական նախկին հանրապետութեան, կտոր կտոր էր, բաժան-բաժան և ստորուկ Աիէնայի արքունիքին: Անհրաժեշտ էր միացնել Մեծ Աշխարհի, տիեզերական պետութեան այդ առեւանգւած զաւակը, պէտք էր մի վսեմ ու յաղթական շարժումով յետ մղել վատթար թշնամուն, որի լուծը արդէն անտանելի էր դարձել պատմական թերակղզու ազատասէր ժողովրդի համար:

Տեղի ունեցան ապստամբութիւններ և ժողովրդական շարժումներ զանազան ժամանակներում: Անցած դարի 20-ական թւականներին, Աիէնայի դիպլոմատիական հաւաքումից հազիւ քանի մի տարի յետոյ՝ գաղտնի ընկերակցութիւնները ազատութեան առաջին փորձն արին: «Սրբազան Գաշնակցութիւնը» զօրեղ էր տակաւին. յեղափոխական գաղափարը նոր էր խեղդւած: բովանդակ Եւրոպայում: Եւ քաղաքի ազատականները չկարողացան յաղթականորէն պսակել իրենց գործը: Բռնակալների միութիւնը յաղթեց ապստամբւած Իտալիային:

Այնուհետև այս երկրի շարժումները, ազգային, հայրենասիրական բռնւն արտայայտութիւնները մի գեղեցիկ ներ-

դաշնակութեամբ զուգորդեցին Եւրոպայի զանազան մասերում և ամենից առաջ Ֆրանսիայում տեղի ունեցած ժողովրդական, սահմանադրական, յեղափոխական շարժումներին: 1830 թւականի յուլիսեան յեղափոխութեան արձագանքները տարածւեցին—ուրիշ երկրներէ հետ միասին— նաև Իտալիայի վրայ: Մարտնչող երիտասարդութիւնը դրսև բարձրացրեց, աւստրիական ճնշող լուծը թօթափել կամեցաւ: դիւցազնական մենամարտը ծայր տւեց թերակղզու զանազան վայրերում, վիրաւոր հայրենասիրութիւնը՝ միացած Մեծ Յեղափոխութեան անմուսնալի սկզբունքներին — շարժման մէջ մտաւ... Այս անգամ էլ սակայն ամեն ինչ թաղեց արեան և մոխիրների մէջ: Պայքարող բազումը խորտակեց և երկիրը նորէն սկսեց յղացումի և ստեղծագործութեան գաղտնի, հալածական առաքինութիւնը: Ազատութեան և հայրենիքի արդար գործը սպանեց այստեղ Ապենինեան բարձրութիւնների վրայ. սպանեց նաև այնտեղ, Աիւլայի ափերում, Լեհաստանի երկնքի տակ: Մի տեղ Հաբսբուրգեան անարգ թուրք, միւս տեղ Ռոմանովների անիրաւ սուլինը վերջ դրին մարտնչող ժողովուրդների մաքուր, վսեմ դատին...

Եւրոպական հարթութեան վրայ—մի քանի բախտաւոր բացառութեամբ—այս թւականի յեղափոխութիւնից յետոյ ևս ծաւալեցին յետաշարժման և հակահարածի (reaction) սև թիւերը: Տարիներ անցած՝ 1848 թւականի քաղաքական և հասարակական յեղափոխութեան հետևանքները երևացին նաև մարտի ու պայքարի այս անընկալն ու գերահրաշ միջավայրում: Ազգաբնակչութիւնը աւելի պատրաստ էր, յեղափոխական գաղափարները այս անգամ աւելի հասունացած էին, աւստրիական պետութիւնը կողմող միւս մասերում ևս ընդդիմադիր շարժումներ էին ծայր տւել: Թւում էր թէ այս անգամ, այնքան դիւցազնեղութիւնից յետոյ, Իտալիան պիտի հասնի իր վաղեմի, իր միակ նպատակին: Ըարժեց Աենեաիկը, խրոտաց մտքով Լոմբարդիան, առաջ խաղացին թերակղզու միւս մասերը — սակայն այս անգամ ևս անկարելի եղաւ ձեռք բերել այն թանկագին, ցանկալի ազատութիւնը, առանց որի ժողովուրդների կեանքը չունի ոչ մի հրապոյր, ոչ մի հմայք: Պատմութիւնը ասես կամենում էր մի եղերական օրինակով ապացուցանել այն դառն ճշմարտութիւնը՝ թէ ազատութիւնները և հաւաքական արդարութիւնները ձեռք են բերում երկարամեայ ու յամառ աշխատանքի գնով, թէ ժողովուրդները, ստորև, անիրաււած ազգերը պիտի անվերջ ու անդուլ կռիւներով նւաճեն իրենց անկախութիւնը:

Մի տասնամեակ ևս և Իտալիան կամաց-կամաց, բայց հաստատուն քայլերով մտնում է տարիների պարտութիւնների մէջ իր երազած յաղթանակին: 1859 թւականը անջնջելի կը մնայ Իտալիայի պատմութեան կարմիր էջերում: Կս չէ մուսաղէ և յիշատակելի քաղցրութեամբ կը յարատեի նաև ընդհանուր պատմութեան երեսների վրայ, իբրև գաղափար և հերոսական անձնագրահութեան մի պատկառելի յաղթանակ, իբրև ազատութեան և արդարութեան մի հրաշալի պատկաւորում, իբրև հրահանգիչ, խրատաւորական և քաջալերող վեպ բոլոր այն ազգերի համար, որոնք մարտնչում են յանուն նոյն սկզբունքների ուրիշ աստղերի տակ և ուրիշ բարձունքներում...

Իտալիայի ազատութիւնն ու անկախութիւնը մի քանի ուժերի և գործօնների հետևանք է: Ամենից առաջ պէտք է յիշատակել այն ընդհանուր, համաառաւ միջնորդարը, որ առաջ եկաւ Եւրոպայում՝ յեղափոխութեան մեծ սկզբունքների շնորհիւ Մարդը և սուգը ազատ հռչակեցին և նրանց իրաւունքները անբռնարարելիս Այս գաղափարով էր ապրում և շնչում դարը և դարի որդին առհասարակ: Ընդհանուր, համաշխարհային այս մեծ գործօնի կողքին երևան եկան մի շարք ազգական Իտալիայում և Իտալիայից դուրս: Լոմբարդիայի թագաւոր Աիկտոր Էմմանուէլ, նրա հաշտկաւոր մինիստր Կալուր, Ֆրանսիայի կայսր Նապոլէօն III և առաւելապէս ժողովրդական հերոսներ՝ Մաձձինի և Գարիբալդի—որոնք բոլորն էլ միացին իրենց տարբեր արժէք ունեցող ուժերը միեւնոյն նպատակին՝ հասնելու համար:

Պէտք է շեշտել, իհարկէ, որ բոլոր այս ազգեցութիւնները մէջ ամենից աւելի դադափարական, ամենից աւելի պատկառելի մասը ընկնում է ժողովրդական տարրին, ժողովրդական դիւցազնութեան: Արիւոր Էմմանուէլի տրամադրութիւնը, Նապոլէօնի աջակցութիւնը, Վալուրի նուրբ և իմաստուն դիւանագիտութիւնը ամուլ և անպտուղ տարրեր կը մնային, եթէ դրանց չ'առաջնորդէր հսկայ զանգւածի բուռն և իրաւատ անձնագոհութիւնը, անկաշառ և անարեւատ ողևորութիւնը: Իտալիան այսպէս վերածնեց: Միջերկրականի հին, այլևս հանրապետութիւնը, դարաւոր սքանչելի քաղաքակրթութիւնը չէր կարող ստրուկ մնալ Հաբսբուրգեանների արիւնտ ճանկերում... Պատմութիւնը սուտ կը լինէր, եթէ այդ դասական աշխարհը չստանար ի վերջոյ իր անկախութիւնը և իր անկախելի իրաւունքը...

Եւ եթէ մարդկութիւնը յետագայում ողևորել է Իտալիայի ազատութեան դրաւիչ դիւցազնավեպով, եթէ միւս ազգերը, մանր, ճնշւած, բռնաբարւած միութիւնները ներշնչել են այդ յիշատակելի պատմական ակումով դրա պատճառը ոչ թէ անջատական դադափարն է, այլ մարդու և ազգի անկողոպտելի իրաւունքների յաղթանակը: Իրերը այնպէս դասաւորեցին և պատմութիւնը այնպէս պահանջեց, որ իտալացի մարդու և իտալական ազգի ազատութիւնը տեղի ունենար աւստրիական լծի թօթափումով և աւստրիական տիրապետութեան մերժումով: Դա դադափարի յաղթական պատասխանն էր Աիէնայի անիրաւ և իմաստակ կարգադրութեան, դա պատմութեան դասն էր մետերնիկեան յանդուգն և սանձարձակ իշխանութեան: Վատ հովիւները՝ Իտալիան նետեցին այն նժարի վրայ, ուր Աւստրիան էր, որպէսզի այդպիսով հաւաքուի և հաւաքուի շուրջ և բերրական պետութիւնների դիրքը, վատ հովիւները՝ կամեցան խեղդել մի քաղաքակրթութիւնը, ազգութիւնը Ժողովուրդները ստիպան աւաքինի ցատումով ծառայան դիւանագէտների հաշիւների դէմ և մաքրեցին սևը մարդկութեան ճակատից...

\* \* \*

Իտալիայի ազատութեան յիւնամեակը դուգադիւլում է մի ուրիշ յիւնամեակի հետ, որ աւելի թանգ է մեզ համար և որ այնքան նշանակութիւն ունի մեր հասարակական-քաղաքական ինքնաճանաչութեան տեսակետից: Տաղանդաւոր հայ հրապարակախօս և յայտնի հասարակական գործիչ Մ. Նալբանդեան գրած է, կամ աւելի ճիշտ փոխադրած է, Իտալիայում, 1859 թւին, ազատութեան ճակատամարտի արիւնահեղ օրերին իսկ, նշանաւոր Մեր հայրենիք՝ բանաւտեղծութիւնը: Արատանւած իտալուհու բերանից, ամենաբուռն ողևորութեամբ երգւած այդ որսորդուտ և կուռ հիմքը այնուհետև յիսուն երկար տարիների ընթացքում՝ դարձել է մեր երիտասարդութեան սիրելի ն: Մեր ժողովրդի լաւագոյն տրամադրութիւնը և մեր հասարակութեան վեհանձն բնազդները դրաւիչ պայծառութեամբ այդ բանաստեղծութեան մէջ են արտացոլել:

Ամենայն սեղ մահի մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնի,  
Բայց երանի ով իւր ազգի  
Ազատութեան կը զոհի:

Պատգամաբերի խորունկ ողևորութեամբ և անասան հաւատքով ներշնչւած այս բառեակը միշտ յուզել է և կարող է յաւիտեան յուզել մեր ժողովրդի բոլոր խաւերը առհասարակ: Գժւար է յոյց տալ մի ուրիշ բանաստեղծութիւն, որ այնքան լայն ժողովրդականութիւն ունենայ, որքան վաղամեռնիկ հրապարակագրի և անկեղծ հերոսի այս յուզիչ խօսքը...

Եւ այսօր, յիսուն տարի յետոյ, երբ մեր ժողովուրդը մասամբ անյաճ ազատութեան դժուարին պայքարը նորէն կարող է արտասանել հայ բանաստեղծի չքնաղ երգը, նորէն կարող է դիմադրաւել մահին՝ յանուն ազատութեան, հաւատարմութեան և եղբայրութեան:

# Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Պ Ի Տ Ա Կ Ա Ն

## IV

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Մարդկային ընկերակցութեան ծնունդը, նրա նախնական կերպարանքը, նրա առաջին քայլերն ու խորխուրտները բնութեան անձայրածիր լաբիրինթոսում...

Ասացինք արդէն, որ այդ բոլորը տակաւին պատած է անյայտութեան մառախուղով, ինչպէս առհասարակ սօցիոլոգիական, հասարակագիտական բոլոր այսպէս կոչւած սկզբնաւորութիւնները:

Եւ մենք երկար չենք կանգ առնի նրանց վրայ, կը յիշատակենք ընդունւած հիպօթէզները, ենթադրութիւնները և առաջ կ'անցնենք:

«Հիպօթէզ» անելով, չը պէտք է հասկանանք սոսկ «ենթադրութիւն»: Հիպօթէզներ կան, որոնք ընդունում են դիտական ստոյգ դրութիւնների կերպարանք: Առանց այդ տեսակ հիպօթէզների ժամանակակից գիտութիւնը արած չէր լինի այն հսկայական առաջադիմութիւնները, որ նա արել էր Գիտական միտքը առաջ է մղում իր գործունէութիւնը ոչ միայն դրական, փորձնական մեթօդով (à posteriori), այլ և դ է դ է ք ս ի օ ն վ, հետևութեամբ (à priori): Նա կուսհում է որոշ ճշմարտութիւններ և յետոյ միայն ձգտում է հաստատել վաւերել նրանց: Նա հաստատում է à priori (առաջաւան) ընդունւած դրութիւնների գիտականութիւնը միայն ժամանակ, երբ դտնում է լիակատար համաձայնութիւն այդ դրութիւնների և դիտական հետազոտութեան բոլոր պատրաստ եղբայրացութիւնների միջև:

Այդպէս են հաստատուել բոլոր նշանաւոր հիպօթէզ-թէօրիաները, սկսած Կանտ-Լապլասեան տեսութիւնից—որի համեմատ երկրադունդը, արեգակը, լուսինը և բերբաւոր մոլորակներն ու համաստեղութիւնները առաջ են եկել ժամանակի անվերջութեան մէջ միևնոյն ս կ զ բ ն ա կ ա ն մ ի դ ա յ ի ն գ ա ն գ ւ ա ծ ի ց (la nébuleuse), որ պտտուել է շրջանաւոր, ձևափոխուել է յաւիտեանօրէն տիեզերական անհունի մէջ կենտրոնաձիգ ու կենտրոնախոյս ուժերի գործակցութեամբ—մինչև Գալիլեան հուշակաւոր թէօրիան մ ա Ր դ ու ա ն ա ս ն ա կ ա ն ծ ա գ մ ա ն մասին—որի համեմատ մարդկային տեսակը հանդիսանում է որպէս մի օղակ (առայտմ բարձրագոյնը) կենդանական էւօլիւցիայի կենտրոնից շրջալի վրայ—մինչև Հեկկելեան հոյակապ հիպօթէզը կ ե ա ն ք ի ծ ա գ մ ա ն խնդրի շուրջը, որի համեմատ տիեզերական զարգացման անդրագոյն շրջաններում, անխաճի հսկայական առատութեան շնորհիւ, կենսանիւթերի մի հզօր ու խորհրդաւոր գործակցութեամբ առաջ է եկել անօրգան, անգործարան տարերքներից հուշակաւոր մ օ ն է բ ը, պրօտօպլազմը, արարչագործ նախանիւթը...

Ոչ Կանտ, ոչ Լապլաս, ոչ Գալիլեյ, ոչ Հեկկել չեն մտել ու հետազօտել տիեզերական անցեալի այդ կորած, մշուշապատ անդունդները: Սակայն դրանց տեսութիւնները միանգամայն ներդաշնակում են գիտութեան, փորձնականութեան բոլոր այլազան եղբայրացութիւնների հետ և չը կայ մի հատիկ իրողութիւն, որ հակասէ նրանց, մանաւանդ երկու առաջիններին: Չարլզ Գալիլեյ չի գտել այն «միջին աստիճանը», փոխանցման այն տեսակը, որ կապում է մարդէակին բարձրագոյն կապկային տեսակի հետ, բայց դա չի արգելում նրան և բովանդակ համաշխարհային գիտութեանը՝ յայտարարել համարձակ, որ այդ միջին օղակը—մարդու և բարձր կապիկների ընդհանուր նախահայրը—անպայման գոյութիւն է ունեցել որևէ ժամանակ և որ պէտք է փնտրել նրա կմախքները երկրի խորունկ շերտերի մէջ: Գալիլեյ, Հեկկել, Վայսման ու այլ տիեզերահուշակալ բուսնները չեն դիտել փորձնականապէս, անձնապէս, թէ ինչ ձևով է այն հեռաւոր, անյիշատակ շրջաններում մարդ-տեսակը

առաջ եկել այն ընդհանուր նախատիպից. դրա հետ միասին շատ ուրիշ «բացեր» ևս կան. դարձվենական տեսութեան մէջ սակայն նրանք անզոր են խախտելու դարձվենիզմի ներդաշնակ ամբողջութիւնը, հաստատուած փաստերի մի վիժխարի լեռան վրայ, ընդունուած հանրորեն, համաշխարհայնորեն — և այսօր այդ թէօրիաներն ու հիպոթեզները չդաւանողները դուրս են գիտուածեան հօրիցօններից:

Մովսիսական և Յիսուսեան արարչագործութեան «թէօրիաները» վաղուց արդէն պատմութեան սեփականութիւն են դարձել, նրա հետ միասին Ադամի ու Եւայի առապելը: Մարդկութիւնը բացառութիւն չէ տիեզերքի մէջ, նա մի ջոկ, առանձնաշնորհեալ ստեղծագործութեան արգասիք չէ. նա ծնունդ է, իր լաւ ու վատ բնազդներով, տիեզերական նոյն կոյր, հզօր տարերքների, ինչպէս և ամբողջ անասնական աշխարհը. նա ծնւել է ոչ թէ մի գոյգից, աստիճանական ծննդաբերութեամբ, այլ խմբումներով, հասարակութիւններով ինչպէս բոլոր կենդանական տեսակները:

Առապել է և նախնական Ռօբինզօնը: Մենաւոր, կղզիացած անհատը գոյութիւն չի ունեցել երկրի վրայ, ինչպէս որ գոյութիւն չի ունեցել յարատեօրէն կղզիացած մարդկային զոյգը: Պէտք է չէնք գիտութեան տւած անժխտելի երակետից՝ որ մարդկային գոյութեան արշալոյսին եղել են ոչ թէ մարդ-անհատներ, այլ մարդկային ընկերակցութիւններ:

Vae soli! «Այ՛ մենակին»... Այդպէս է եղել բնութեան անագործն ճիշդ այն սարսափելի ժամանակներում, այդպէս է նա միշտ, այդպէս է և այժմ: Անհատը մենակ ոչինչ է եղել բնութեան թշնամի ուժերի հանդէպ: Ահա թէ ինչու — դարձվենական բնական ընտրութեան՝ զօրութեամբ իսկ — մարդիկ ի սկզբանէ հակաձեռն են եղել ապրելու ընկերակցութիւններով: Ընկերական կամ հասարակական բնազդը (sociabilité) առաջ է բերել ամենուրեք սրտ զործակցութիւն (coopération) զատ զատ մարդկային համախմբումների ծոցում:

Գոյութեան կռիւը իր ահեղ բնաշնչող ձևով կամ ինչպէս ասում են, կռիւը բոլորի ընդդէմ բոլորի՝ չի եղել համատարած և անիրական մի իրողութիւն: Որոշ դարձվենիաներ, ժամանակակից բուրժուազական կարգերի փաստաբան գիտունները ճշմունք են այդ ձևով պատկերայնել մեծ անդլիացու վարդապետութիւնը. հրանք ճշմունք են ապացուցանել, որ պատերազմը իր աւերիչ ձևերով և նրա հետևանք ծնունդն ու հարստահարութիւնները ծախսատարական ու անխուսափելի են մարդկութեան համար, որ «այսպէս եղել է միշտ, այսպէս էլ լինելու է յաւիտենականորեն», որ, հետևապէս, անհրաժեշտ է, որ մարդկութեան մի մասը իշխէ, միւսը հպատակի ու ստրկանայ, մի մասը, մարդկային «արիստոկրատիան», պիտի մնայ միշտ զարգացման դադարին, միւսը, «ստորին» ցեղերն ու դասակարգերը, — անդունդներում...

Սակայն ինքը Գարվինը կանխել է արդէն այդ վնասակար ծայրայեղութիւնները, յայտարարելով, որ մարդկային շարժումն ու բարձր աստիճանների վրայ գոյութեան դաժան մենամարտը հետզհետէ մեղմանում, թուլանում է ուրիշ գործօնների ազդեցութեամբ: Իսկ այսօր գիտութիւնը, հրահանգում թարմ բնագիտական ու հասարակագիտական ուսումնասիրութիւններից, պնդում է, որ նոյն գործօնների ազդեցութեան տակ մեղմել է միշտ գոյութեան պատերազմը անգամ հեռուոր, նախապատմական շրջանների մէջ, անգամ անասնական էօլոյցիայի սանդուխքների վրայ:

Միշտ և ամեն տեղ նրան որոշ շահով հակակշիռ է եղել ընկերականութեան, հասարակականութեան կամ փոխադարձ աջակցութեան բնազդը — մի բնազդ, որ էպպէս հակա-տեսական է (antiégoïste) և որ տարբեր ժամանակներում յորձրւել է տարբեր անուններով: Ա դ ա մ Մ Տ ի տ, հռչակակար տնտեսագէտը, անւանել է այն sympathy, հ ա մ ա կ ր ու թ ի լ ա ն, իսկ յայտնի ընկերաբան (սոցիօլոգ) Օ դ ի լ ա ս Վ օ ն տը — ա լ տ ր ու լ ի գ ա մ, այլասիրութիւն: Այդ վերջին բառը և մնայ հաստատապէս սոցիօլոգիայի, հասարակական գիտութեան մէջ:

Առիւր փաստ է. հզօր, բռնաւոր ու աւերիչ փաստ, ինչ-

պէս ուժի, կոպիտ ետի պաշտամունքը, ինչպէս դաժան էօլոյցիա: Ոչ ոք չի ժխտի այդ իրողութիւնը, որ ծաւալուած է մարդկային բովանդակ էօլոյցիայի վրայ և որ մերթ ընդ մերթ — ոչ միշտ, ինչպէս ուզում են հաւատացնել պատերազմով գիտուններն ու դիպլոմատները — խաղաղել է շինարար, քաղաքակրթող, դրական դեր:

Սակայն, պատմական իրականութիւնը արդեւում է պնդել, որ այդ բերտ ուժի պաշտամունքը, պատերազմների ու ճրնչման սօգին. յ ա տ ու լ ի է մ ա ր դ կ ա յ ի ն բ ն ու լ թ ե ա ն ը, յաւիտենօրէն ու ճակատագրօրէն անհրաժեշտ նախնական վայրենի ու բարբարոս, նոյնիսկ մեր, քաղաքակրթի հասարակութիւնների պատմութեան նորագոյն ուսումնասիրութիւնները պարզում են, որ այդ հասարակութիւնների մէջ ուղղական, բռնատիրական հակումների դիմաց՝ իր պատկառելի տեղն է ունեցել նաև ընկերական համերաշխութեան էպպէս խաղաղասէր բնազդը \*):

Ծանօթ իրողութիւն է, որ պատմաբանները իրենց հետազօտութիւնների մէջ սովորաբար կլանում են ազդերի կենսի դրամատիկական, ցնցող ու շառաչիւն դրադներով, պատերազմներով, յաղթութիւններով ու պարտութիւններով և դժբախտաբար շատ սակաւ ուշադրութիւն են նւիրում ժողովուրդների մ ա ս ս ա յ ի ն կ ե ա ն ք ի արտայայտութիւններին, որ անհասարակ բաւականաչափ ուժեղ շեշտել է ալտրուիստական շինարար բնազդը, խաղաղասիրութիւնն ու համերաշխութիւնը:

\*

Ինչպէ՞ս առաջացաւ մ ա ր դ կ ա յ ի ն ընկերակցութիւնից ա գ գ ա յ ի ն ընկերակցութիւնը...

Ինչպէ՞ս կազմակերպւեց ազգայնական առանձնայատուկ բնաւորութիւնը, սօգին, գիտակցութիւնը. երբ, որտեղ, ի՞նչ պայմաններում են հաստատուել այդ վեթխարի ու դառամեալ ազգային քաղաքակրթութիւնները Չինաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում. երբ են ծնունդ առել պարսկական, հրէական, հայկական, յունական ու այլ անթիւ ազգութիւններն ու հայրենիքները, և ի՞նչ ձև է ունեցել նրանց սկզբնական հասարակարգը...

Ինչպէ՞ս իմանալ... Մի քանի հազար տարի է միայն, ինչ լուել է «պատմութեան» առաջին թիթիվանքը: Մի քանի հազար տարիէն անդին՝ ամեն ինչ խորասուզած է նախապատմական՝ ազլամուղջի մէջ:

Եւ այնուամենայնիւ, հասարակական գիտութիւնը այնքան էլ անձար չէ. նա ունի իր ձեռքում հետազօտութեան ա ն ու լ զ ա կ ի մ ե թ օ դ ը: Եթէ չենք կարող ծանօթանալ այն անիշատակ անցեալի հետ ուղղակի, անմիջապէս, կարող ենք ծանօթանալ անուղղակի: Այն, մնացել են բարեբախտաբար, երկրագնդի այլևայլ ծայրերում վայրենի ու բարբարոս մարդկային զանգւածներ, որոնք անթիւ դարերից ի վեր ապրում են անշարժ, գրեթէ քարայած վիճակում և նրանց մէջ ցոյլում են, անտարակոյտ, նախնի մարդկութեան բնորոշ գծերը: Ուսումնասիրել այդ վայրենի համայնակենցաղը, միևնոյն է թէ ուսումնասիրել մեր հեռուոր, անիշատակ նախնիքներին: Եւ հասարակական գիտութիւնը — մասնաւորապէս նրա մի ճիւղը — ց ե դ ա դ ր ու լ թ ի լ ն ը (ethnographie) — վերջին 40—50 տարիների ընթացքում շատ բան է արդէն վստասկել այդ հետազօտութիւններով: Մի շարք փայլուն խուզարկու դէմքեր — Բալսօֆէն, Մակ Լեննան, Մորգան, Տայլօր, Սպեյսեր, Մաքսիմ Կոպլեվսկի և այլն — հազդին զարկ են աւել նախամարդու և առաջին հասարակութիւնների ու հաւաքական հաստատութիւնների ուսումնասիրութեան, արել են անգնահատելի գիւտեր, որոնք ուժգին լյս են սփռում նախապատմական խաւարի վրայ: Երկրագիտութիւնն ու հնէաբանութիւնը օգնութեան եկան հասարակագիտութեան, գետնի տակ, երկրագնդի խորունկ շերտերում գտնուած հաղաբար կմախքային, դործիքային մնացորդների ուսումնասիրութեան հիման վրայ աշխատեցին կառուցանել վերաբարձրել նախ-

\*) Stn. Kropothkine, L'Entre-aide.



նական հասարակակենցաղը, անտեսութեան, պարագմունքները եղանակը կային:

Կայ ուրիշ միջոց, որ առաջադրում է նոյս անուղղակի, համեմատական մեթոդը: Մի շարք գործօններ, որոնք այսօր կամ առհասարակ մեղ ծանօթ պատմութեան ընթացքում, նպաստաւորում են ազգութիւնների դոյացումն ու առաջադիմութիւնը, խաղացել են, անտարակոյս, իրենց դերը և հինաւորաց անցեալում... Մի շարք բնական ու հասարակական երևոյթներ, որոնք հզօրացան շեշտում են ժամանակակից քաղաքակրթութեան արշալոյսին, շեշտել են, անշուշտ, նաև մարդկութեան նախնական շրջաններում: Եթէ «երբ»-ը շենք կարող ասել, կարող ենք ասել «ինչպէս»-ը, կարող ենք ասել և «ինչու»-ն:

Արիւնակցութիւն, աշխարհագրական միջավայր, կլիմա, հողի, օդի որակութիւն, պարագմունքի ձև, ազգաբնակչական շարժումներ ու պատերազմներ—ասհա գործօններ, մինը միւսի ծնունդ, մինը միւսով պայմանաւորւած—որ իրենց տիրական ազգացութիւններով կուէլ կոփել են ժողովուրդների ճակատագիրը, ստեղծել են սմանցից ազգ, պետութիւն, քաղաքակրթութիւն, ուրիշները՝ սոսկ մարդկային կօդումբրաններ, հաւաքոյթներ, որոնք դարերով աննպատակ թափառել են երկրագնդի խուլ խորշերում և ի վերջոյ կամ յարտակել են, ինչպէս այժմեան վայրենի ցեղերը, կամ թէ արտուէլ կուէլ են դնացել դոյութեան կուէլ ուրագանին:

Ա Ր Ի Է Ն Ա Կ Կ Ս Է Թ Ի Է Ն Ը բոլոր նախնական մարդկային ընկերակցութիւնների յատկանիշն է: Եւ խօսքն այստեղ մանր ա Ր Ի Է Ն Ա Կ Կ Ս Է Թ Ի Է Ն Ը ն ա ն ի ք ն Ե Բ Ի մասին չէ: Ինչպէս ասացինք, հասարակագիտական, ցեղազբահան հետազոտութիւնները պնդում են, որ մարդկութիւնը չի սկսուէլ փոքրիկ, կղզիացած ընտանիքներով: խուլմբն՝ է մարդկային կազմակերպութեան սմնանախնական ձևը: Ե ոչ միակին կամ բազմակին ընտանիքը, ինչպէս կարծոււմ էր մինչև մեր դարը: Հասարակութիւնը չէ, որ բոլորում է ընտանիքից, այլ ընդհակառակը, ընտանիքն է, որ դալին է հասարակութիւնից յետոյ, իբրև էւօլուցիայի աւելի անագան արգասիք:

Առաջին մարդկային համայնքները ներկայանում են մեղ թափառական համակարգումների ձևով, որ անւանում են Ֆրանսերեն tribu, գերմաներեն Stamm, հայերեն անւանենք ցեղ, առ ի չգոյէ լաւագոյն բառի \*): Գրեթէ բոլոր խաղաղիւնների վկայութեամբ՝ այդ սկզբնական շրջանում հեռքը չը կար միակին կամ բազմակին սմանութիւնների: Տիրում էր անկարգ խ ա ու ն ա կ ե ց ու Թ Ի Է Ն (promiscuite), նոյնիսկ սմնամօտիկ արիւնակցների միջև: Կանայք համայնական սեփականութիւն էին, ինչպէս ամեն ուրիշ բան, ինչպէս գործիքները, աշխատանքն ու վատակը, որսորդութեան, ձկնորսութեան հողերը կային:

Երկարատև էւօլուցիայից յետոյ միայն՝ ց Է Ղ Ը յանգել է այսպէս անւանւած gens-ին \*\*) (տոհմ), ուր այդ խառնակ համայնակենցաղը, զուտ վայրենի ու սանձարձակ բարբերը մեղմացած են. նրանք մեղմացել են, հարկաւ, աստիճանաբար, սմանութիւնները հետզհետէ սահմանափակել են որով կանոններով: Այդտեղ, գենական կարգերի մէջ կանայք դարձեալ ընդհանուր սեփականութիւն են. սակայն արդէլոււմ է կին աւնել ն ե Ր ս Ի ց վերցնում են կանանց դ Ր ս Ի ց, ուրիշ տոհմերից. նոյնը—փոխադարձաբար Գ ենք կամ տոհմը ներկայացնում է միևնոյն մայր-արմատից, միևնոյն նախածրից առաջացած շուռակիցները, սերունդները: Հ ա յ Բ Ը չբանում է այդ հասարակական սխտեմի մէջ շեշտում է մ օ ր անձնաւորութիւնն ու ազգացութիւնը:

\*) Հայկական բառարանները «ցեղ» բառով են յորգորում անխիբ եւ՝ tribu եւ՝ clan եւ՝ race եւ՝ միջին իսկ genre (le genre humain բարգմանում են՝ յաննալս «մարդկային ցեղ») կայլն: «Ցեղ» են՝ անւանում եւ քրդական ափրէքներին եւ հուրիւր-միլիոնաւոր սլաւոնութիւնը:

\*\*) Lais, գ Բ Ե ու ս, գերման. գ Բ Ե ս, մրանս. ժ ա ն ս. նոյն իմաստ ունի, անհարակոյս, պարսկական (թ.՝ արաբական) յիլմս-ը, որ անցել է նաև մեր ժողովրդական բառարանների մէջ. եւ որ նշանակում է s. o. n. i:

դա «մատրիարխատի» կամ մայրական իշխանութեան շրջանն է: Մօր «իշխանութիւնը» գործարարել է արդեօք նոյն ձևով, ինչպէս յետագայում: Հօր իշխանութիւնը, եղե՛ք է արդեօք երբեկիցէ կին-ամազօնների տիրակալութիւնը, ինչպէս սմանք պնդում են—այդքանը ստոյգ չէ: Մտոյգ է սակայն, որ գենական կամ տոհմային կազմակերպութեան մէջ մ օ ր իրաւունքն ու ազգացութիւնը գերակշռող դեր են ունեցել որդիք, սերունդները: ամբողջ տոհմաձառը մօր անունն են կրել, որովհետև այդ քառային խառնամուսնութեան մէջ հօր ու զաւակի ֆիզիօլոգիական կապն անյայտ էր, յայտնի էր միայն ազգակցութիւնը մօր կողմից, զաւակները մնում էին մօր մօտ, վայելում էին միայն մօր խնամքը:

Ամուսնական ջոկ օրէնքի վրայ հիմնւած այդ տարապայման կազմակերպութիւնը գտնոււմ է բոլոր ազգերի զարգացման արշալոյսին—այդպէս են հաստատոււմ Բախօֆենի, Մօրգանի և շատ ուրիշների մանրագնին հետազոտութիւնները, այդպէս է ընդունում ժամանակակից սօցիօլոգիան, հակառակ մի այլ կարծիքի, որ ժխտում է այդ իրողութիւնը և որ պնդում է, թէ մարդկութիւնը սկսուէլ է ամենուրեք հ ա յ Բ ա կ ա ն ընտանիքներով: Նախնական սեմիաները, հօմերական շրջանի յայտերը, տայիտեան օրերի գերմանները, առաջին կելտերը և առաջին սլաւօնները ունեցել են նոյն տոհմային կազմակերպութեան շրջանը, որ այսօր գտնւած և ամենայն մանրամասնութեամբ նկարագրւած է աւստրալիական վայրենիների, կարմրամորթների, էսկիմոսների և ուրիշ վայրենի ցեղերի մէջ: Այ մի տարակոյս, որ նոյն ջինսը՝ նոյն տոհմային հասարակական սխտեմը դոյութիւն է ունեցել երբեկիցէ նաև պարսիկների, արաբների հրէաների, հայերի ու այլ ժողովուրդների նախապատմութեան մէջ, թէև հայկական դիցաբանութիւնը, օրինակ, պատկերացնում է հայ ցեղի սկզբնաւորութիւնը նահապետական գերդաստանի ձևով (Famille patriarcale, կամ պարզապէս patriarchat, հայրակալութեան), երևակայական Հայի՝ նահապետի առաջնորդութեամբ:

Ը ն տ ա ն ի ք Ը ժամանակակից իմաստով ու է դալին: Անշուշտ, հարաւոր է և նոյնիսկ հաւանական է Սպենների կարծիքը, որ այդ նախնական խառնակցութեան շրջաններում տեղ-տեղ եղել են նաև մասնաւոր, կղզիացած ընտանիքներ, հօր գերագոյն խնամակալութեան տակ. բայց նրանք եղել են բացառութիւններ:

Մի օրինակելի ներդաշնակութիւն ու կարգապահութիւն՝ գենական այդ կարգերի մէջ: Այ մի գրւած օրէնք.—բայց նրա փոխարեն կար ս ո վ ո ր ու Թ Ի Է Ն Ը, դարերից ի վեր ներազորւած, ամբարշտուած: Ամեն ոք կատարում էր այդ անտիպ օրէնքի հրահանգը զուտ կրօնական երկիւղածութեամբ: Անհատը—հաւաքակալութեան համար իւրաքանչեւից գործելու նշանաբանը—ը ն գ հ ա ն ու Բ Ի շ ա Տ Ը ամբողջ տոհմի բարօրութիւնը: Գա մի տեսակ ա ո հ մ ա յ Ի ն հ ա յ Բ Ը ն ա ս Ի ք ու Թ Ի Է Ն Ը Ե ր... Համբարշտութեան մեծ գաղափարը սկսում է փոքրիկ չափերով, ապա ծաւալւում է աստիճանաբար ու ալիքաձև նախ խմբի, ապա տոհմի, ապա ցեղի կամ ազգի վրայ,—մինչև որ հասնի ամբողջ մարդկութեան...

Եւ ամեն ինչ հաւաքական դրոշմ էր կրում այդ նախնական հայրենիքում, ամեն աշխատանք ու վայելում—համայնական: Այնպէս է կոմունիզմը այդ անդրանիկ սխտեմը...

Սակայն այդ մօրալը, պարօքի, անձնագոհութեան այդ սրտատուչ զգացումները սահմանափակոււմ էին գենոսի, տոհմի շրջանակներով: Նրանցից դուրս, ուրիշ տոհմերի անդամների վերաբերմամբ ամեն բան թոյլատրելի էր—և՛ խաբէութիւն և՛ կեղծիք և՛ թալան և՛ սպանութիւն: Հարգատ տոհմի օրէնք անդամին ինասելը գերագոյն դաւաճանութիւն էր, որովհետև խախտում էր ընդհանուր շենքի խորիքները: Սակայն դաւաճանութեան ու յանցանքի բոլոր ձևերը ընդունելի էին դ Ր ս Ի ց ու վերաբերմամբ: Այսօր մօտաւորապէս նոյն մօրալը չէ, որ շեշտում է ազգամիջեան քաղաքականութեան մէջ ի գէմս իւրաքանչեւը ազգութեան նայիօնալիստ տարրերի...

Տոհմը ճիւղաւորուել է ժամանակի ընթացքում, բունել է

ընդարձակ տարածութիւններ, սեփականացրել է հողը (համայնական, ոչ մասնաւոր սեփականութիւն), հաստատել է մշտնջենաւոր բնակութիւն: Տոհմային համայնքի այդ մշտական բնակահաստատումը մէկն է քաղաքակրթութեան զարգացման ամենաուշագրաւ ու ամենաարգասաւոր հանգրուաններից: Կա չէր կարող տեղի ունենալ որսորդութեան ու խաչնարածութեան շրջաններում, երբ մարդիկ ստիպւած են եղել իրենց շնչին գործիքների ու նախիրների հետ թափառել յաւիտենորէն: Կա—այդ մշտական վերահաստատումը որոշ հողի վրայ—կարող էր միայն զուգադիպել երկրագործութեան բարեբախտ շրջանի հետ, երբ աշխատանքի ու արդիւնաբերութեան գործիքները բաւականաչափ մշակելով, կատարելագործելով, հնարաւորութիւն են ընձեռել մարդկային համայնքներին՝ զբաղւելու հողի մշակութեամբ ու շահագործմամբ:

Այդ հանգամանքը, դառնալով հանդերձ մի տեսակ չուկէտ քաղաքակրթութեան էւօլիւցիայի, զարկ տալով հանդերձ հասարակութիւնների նիւթական բարօրութեան, ապրանքների, ապա և մտքերի ուժգին փոխանակութեան տարբեր կէտերի համայնքների միջև—միևնոյն ժամանակ ստեղծագործեց մէկն այն բազմաթիւ խարխիւներից, որոնց վրայ պիտի բարձրանար ապագայ «ազգի», հայրենիքի շէնքը:

Հողը, անշուշտ, հանդիսանում է առհասարակ ազգայնութեան անհրաժեշտագոյն ստորոգելիներից մինը: Ասում ենք՝ առհասարակ, որովհետև կայ բացառութիւն: Իրականութիւնը վկայում է, որ ազգայնութիւնը կարող է պահպանւել նաև հողը կորսելուց յետոյ: Հրեաները, վաղուց զրկւած հայրենի հողից, ցեր-ցան աշխարհի բոլոր ծայրերում, պահպանել է շատ տեղերում «ազգային համայնքի» և ազգայնական գիտակցութեան իր յատկանիշները:

Այդ մի հատիկ բացառութիւնը հաստատում է ընդհանուր օրէնքը: Ընդհանուր հողը նոյնքան ուժեղ մի գործոն է ապագայ ազգութեան համար, որքան ընդհանուր ծագումը: Այդ վերջինը նոյնպէս չի հանդիսանում մի այնպիսի տիրական գործոն, որի ներկայութիւնը անհրաժեշտագոյն պայման լինի, *conditio sine qua non* աշխարհի բոլոր ազգերի համար: Կա եղել է, ըստ երևութիւնի, մի այդպիսի պայման հին ժամանակում. արդարև, բոլոր հնագոյն ազգութիւնների գոյութիւնը ենթադրում է ընդհանուր ծագման, արիւնակցութեան փաստը: (Արիւնակցութիւնը այստեղ, ի հարկէ, պէտք է հասկանալ շատ թեք ձևով ու սերտ իմաստով, որովհետև լայն, ընդարձակ մտքով արիւնակից են երկրագնդի բոլոր մարդիկ, բոլոր, անգամ ամենահակոտնեայ, ցեղերը): Այդպէս չէ, սակայն, պատմութեան համեմատաբար նոր շրջաններում: Ֆրանսիա, Իտալիա, Անգլիա, Ամերիկա, ժամանակակից գրեթէ բոլոր ուժեղ ազգերը խառն, այլատարր ծագումն ունին: Նրանց բոլորի գոյացման պրօցէսին հաղորդակից են այն անհամար ու այլազան ցեղագրական տարրերը, որ բերել էր իր հետ ազգաբնակչական մեծ գաղթը ասիական հօրիզոններից:

Անշուշտ, հին «կլասիկ» ազգութիւններն ու ցեղերը ևս չեն պահպանել արեան բացարձակ կուսութիւնը, մաքրութիւնը: Չը կայ «մաքուր ցեղ» բառի բացարձակ նշանակութեամբ և դուցէ լաւ է, որ չը կայ. ցեղերի արեան որոշ խառնուրդը օգտակար է դիտւում նրանց զարգացման համար: Արիւնները խճողւել ու խառնւել են ազգաբնակչական շարժումների դարաւոր յորձանքների մէջ: Անգամ ուստի ազգը, որ համեմատաբար դեռ շատ երիտասարդ է, չի կարող փաստաբանել իր «մաքրութիւնը», նրա արիւնի մէջ կայ թաթարական արեան բաժինը—և շատ խոշորը—արդիւնք թաթար հօրդանների դարաւոր տիրապետութեան Ռուսաստանում:

Այնուամենայնիւ, հին ազգերը դեռ կարող են հռչակել իրենց ընդհանուր ծագման փաստը, կարող են խօսել որոշ չափով և արիւնի մաքրութեան մասին, քանի որ իրօք, չը նայած դարերի խճողումներին ու խառնուրդներին, նրանք պահպանել են իրենց նախնական, պապենական յատկանիշները: Ժամանակակից հրեան—ասում է պարիզեան յայտնի հոգեբան Ռիբո—ոչնչով չի տարբերւում իր այն նախնիք-

ներից, որոնք ապրել են տասնեակ դարեր սրանից առաջ: Կայն ֆիզիկական ու հոգեկան դժերը, նայն խառնուածքը, տեմպերամենտը:

Նայն չի՞ կարելի ասել արդեօք հայութեան մասին: Չը նայած ճակատագրի անօրինակ խողերին, հայ երկրի վրայից անցած անհատնում փոթորիկներին, կրօնափոխութիւններին, բռնի ու կամաւոր խառնամուսնութիւններին՝ այդ ժողովուրդը չի՞ պահպանել արդեօք իր նախնիքների ֆիզիօլոգիական ու հոգեկան հիմնագծերը: Այդ հարցման դիմաց բաւականաչափ հրահանգիչ են այն դիտողութիւնները, որ կարող ենք անել թէ ժամանակի և թէ տարածութեան հարթութիւնների վրայ: Անցէք հայկական դիսպօրան երբ մի պտոյտ արէք թէկուզ աւստրիական Ղեհաստանի, Տրանսիլվանիայի, Ռենդարիայի հայ գաղութների մէջ, որոնք փուլած են փոքրիկ բեկորներով օտար, այլապէս ազգութիւնների մէջ, ձուլւած նրանց հետ լեզուով, բարբով, քաղաքակրթութեամբ, ամեն բանով, բացի... մայր-ժողովրդի անտրօպօլօգիական, մարդաբանական բնորոշ դժերից: Այդ վերջինները պահպանւել են ապշեցուցիչ յստակութեամբ: Այդ մի տասնեակ հայածագում պատգամաւորները ունգարական պարլամենտում և այդ 4—5 ուրիշները աւստրիական ռայսարատի մէջ, բոլոր այդ Ղուկաները, Գանիէներն ու Գօրօվէները, Գեյզաներն ու Աբրահամները զատոււմ են իրենց միջավայրի ընդհանուր Փօնի վրայ, ինչպէս սեր ճերմակի վրայ Տիպը նոյն է, ինչ որ հեռաւոր Ղարաբաղում ու Գողթանում, Էրզրումում ու Վասպուրականում: Եւ սակայն սրբիսի անընթացներ են բաժանում այդ համայնքները մայր-հայրենիքից և քանի՞ դարեր են զլլւել Անիի ու այլ վիթխարի կատաստրօֆների օրերից ի վեր, որոնք դուրս են ժայթքել այդ զարմանալի բեկորները, շարտել նրանց աշխարհի հեռու ծայրերը, խղելով իսպառ նրանց կապը հայրենիքի հետ...

Ընդհանուր ծագումը ուժեղական, ուժեղ մի փաստ է: Նրա էութիւնը և յարատեւութեան պատճառները կը պարզենք յետագայում. առայժմ վերադառնանք նախնական «տոհմերին» և առաջ բաշենք մարդկութեան յամրութեաց էւօլիւցիայի թելը:

Մենք տեսնք ուրեմն զենսի մէջ ապագայ ազգայնութեան առաջին թոյլ սկզբնաւորութիւնը, սաղմիկը: Բայց նրան դարգացնելու համար, անհրաժեշտ էին ուրիշ գործոններ:

Գենսական կամ տոհմային կազմակերպութիւնը իր «մայրական իրաւունքի» տիրապետութեամբ, իր համայնական կարգ ու սարքով—յաւիտենական չէր: Ինչպէս ամեն մի ուրիշ հաստատութիւն, նա պէտք է կործանւեր ժամանակի համայնաշինչ հոսանքի մէջ—և կործանւեց:

Սոցիօլօգիներից ու փիլիսոփաներից սմանք ողբում են այդ կործանումը, ուրիշները—ընդհակառակը: Պէտք է յիշատակել, որ դեռ վաղուց, մարդկային այդ նախնի հասարակարգի մասին եղել են երկու տարբեր, տրամագծօրէն հակառակ կարծիքներ: Մէկը, իրեն թարգման ունենալով անգլիացի հասարակագէտ-փիլիսոփայ Հօբս, ներկայացրել է այդ առաջին հասարակարգը, որպէս Գանտիէան մի դժուր: Այնտեղ, ասում է Հօբս, բիրտ էգօիզմի և վայրագ ուժի բացարձակ տիրապետութիւնն էր... Արիւն էր բոլորի ընդդէմ բոլորի, մարդը գայլ էր իր նմանի դիմաց *Homo homini lupus!*...

Միւս կարծիքը, ի դէմս մեծանուն Ժան Ժակ Ռուսօյի՝ իդէալականացրել ու երգել է մարդկութեան նախավիճակը: Այնտեղ, ասում է Ժան Ժակը, հովերգական այն շրջանում՝ ալտրուիզմի, փոխադարձ սիրոյ, հաւասարութեան, պարզ անվթար բարքերի թագաւորութիւնն էր, որ կուլտուրան, քաղաքակրթութիւնը յետագայում աղճատեց, թունաւորեց, անբարոյացրեց... Այնտեղ մարդը ասուած էր, հրեշտակ էր իր նմանի համար, *Homo homini Deus!*

Երկու հայեացքներն էլ մեղանշում են իրենց ծայրայեղութեամբ: Նախնական համայնքները արժանի չեն ոչ խանդավառ իդէալացման ու փառաբանութեան, ոչ էլ անտրուութեան ու նշաւակման: Իրողութիւնը, պատմական, հասարա-



Այո՛, աւանդ ընդհարուճներով ու արիւնալի պատերազմներով են սկսել մարդկային այլեայլ ցեղերի յարաբերութիւնները: Նրանք կուէր, յօշոտել են միմեանց, նախ քան զերար ծանաչելը, իբրև միևնոյն մարդկութեան հաստատման: Եւ թուում է, թէ իրաւ է Սպենսերի յայտարարութիւնը, որի համեմատ պատերազմը այդ նախնական փամայնական երբում հանդիսացել է իբրև բարեբար, գերազանցապէս արգասաւոր մի գործօն, թուում է, թէ ճիշտ է և Էմանուէլի և Կանտի—այդ ազնիւ ու միանգամայն խաղաղասէր փիլիսոփայի—միտքը, յայտնուած 1786-ին, թէ «պատերազմը մի անհրաժեշտ միջոց է եղել բարձրացնելու մարդկային ցեղը... Ենթադրուում են, թէ պատերազմները պակասութիւնն է պատճառ եղել, որ վիթխարի Չինաստանը մնացել է մինչև օրս անշարժ, նեխած, ճահճացած:

Պատերազմի պատճառները—շատ... Նախապատմական այդ ժամանակներում՝ տարբեր աշխարհագրական վայրերում ապրող մարդկային համայնքները—արիւնակից տոհմեր կամ նահապետական ճիւղաւորւած ընտանիքներ—ուռնէին և տարբեր քաղաքակրթութեան աստիճաններ: Մենք առիթ կունենանք յետագայում աւելի մանրամասնօրէն ցուցադրելու աշխարհագրական պայմանների դերը հասարակութիւնների և ազգերի գոյացման մեծ պրօցեսում, առայժմ շեշտենք նրա ազդեցութիւնը պատերազմների վրայ: Այն ժամանակ, երբ դեցուց մի կէտում, շնորհիւ միջավայրի նպաստաւոր պայմանների—ըրբերի առատութեան, հողերի պարարտութեան, ծովեզերայ դիրքի, նաւագնաց դետերի, բարեխառն կլիմայի, մետաղների հանքերի և այլն—մարդիկ կարողանում են համեմատաբար աւելի արագ առաջադիմել, աշողում են ձուլել ու կիրառել մետաղները, ընտանեցնել կենդանիներին, զարգացնել բոյսերի, հացահատիկների մշակութիւնը, մշել առևտուր, կազմակերպել ապրանքների կանոնաւոր արտահանութիւն ու փոխանակութիւն, դառնալ այդպիսով հարուստ ու բարգաւաճ համայնքներ—մի այլ կէտում կամ բազմաթիւ այլ կէտերում, շնորհիւ նոյն աշխարհագրական միջավայրի անբարեշնչող պայմանների, մարդիկ երկար ժամանակ մնում են հօրդային, թափառական վիճակում, չեն կարողանում աւելի հեռու գնալ որորդութեան ու կոպիտ խաշնարածութեան իրենց վիճակից, մարդկային աշխատանքի յարաբերական ամլութիւնը զարգացնում է նրանց մէջ մի կողմից պարզապէս (մակաբոյժ) բնազդներ, միւս կողմից աւելի արագ արձանագրելու է պիտիւնը նման երբույ, դէպի մարդկային անձնաւորութիւնը, նրա կեանքը, գոյքն ու պատիւը... Ահա մեծ մասամբ այդ տիպի համայնքներն են, որ չունենալով պարապմունքի ու հասարակակենցաղի աւելի նօրմալ ու արդիւնաւոր ձև, դիմում են—ինչպէս այժմեան քիւրդ համայնքի բազմաթիւ աշերթները—կողոպտուի, բռնութեան, աւազակութեան, արշաւում են շարունակաբար առաջին տիպի համայնքների դէմ...

Այդ վիճակը տեւել է դարեր: Նա հարկադրել է յաճախ որոշ հողի վրայ, որոշ սահմաններում ապրող համայնքներին՝ մեծ մասամբ արիւնակից, տոհմերին կամ նահապետական ընտանիքներին—ձօնեալ իրար ընդհանուր ուժերով պաշտպանել հեռաւոր, անյայտ թշնամիների յարձակումներից: Մի տեղ արիւնակից տոհմը կամ ընդարձակ նահապետական ընտանիքը յաղթել է, ջնջել կամ գերակարգել թշնամու ձեռքը, մի այլ տեղ, իր անառիկ դիրքի, իր լաւագոյն զինաւորութեան կամ ուրիշ նպաստաւոր հանգամանքների շնորհիւ, նա կարողացել է քաջաբար դիմագրաւել վտանգներին և

գործոցներ—գոս թիզի օղի ակն կեանքի կամ սերունդների արտադրութիւնը: Այստեղ արդէն մարտեան «սնտական բերդայի» հոչակաւոր «Սոմիզ» (որ ձգտում է մէկ մի այն կողմից օրն օրի փերածել հասարակական բովանդակ էւօլիցիան)—հանդիպում է անյաղթելի խոչընդոսների եւ դառնում է դուռնալի օղի ակն կեանքի քափանցող ու աշտոն միջն անգամ անկարող է յայրախարել այդ անաւոր խոչընդոսը եւ սփայլած է մասնաճեղ այդ դուռնալի օղի ակն կեանքի ակն կեանքի փոքր ինչ վարագուրում ձեւով:

յարատեւել ու բարգաւաճել նստակեանց դոյնութեան ամուր շրջանակներում: Խաղաղ, նստակեանց, արիւնակից համայնքները այդ դարաւոր պատերազմների ընթացքում ապրելով ու կուսելով միասին,—արիւնի ազգակցութիւնը միշտ աւելի և աւելի ուժեղացել է նրանց մէջ, ամրապնդել սերնդէ սերունդ ժառանգական օրէնքի զօրութեամբ, մշակել են նոր-նոր ընդհանուր սովորութիւններ, պատմական աւանդութիւններ, ընդհանուր լեզու և ստաւաններ, աճել է և ընդհանուր հողի զգացումը, պաշտամունքը: Այդպէս է առաջացել ազգային դասական գերդաստանը: Արդէն նահապետական կամ հայրապետական ընտանիքը իր բռնած հողային տարածութեամբ, իր բառբառով ու ասուածներով, իր սեփական մեռելների պաշտամունքով, իր առաջնորդ-նահապետով և իր փոքրիկ վարչական կամ ընտանեկան խորհրդով մի փոքրիկ հայրենիք էր, մի սողմնային ազգութիւն...

Էւօլիցիան շարունակել է: Շարունակել է այդ սաղմերի դանդաղ զարգացումը դէպի «ազգային պետութիւն» ու քաղաքակրթութիւն... Բիւրաւոր փորձութիւնների, բնական ու հասարակական բիւրաւոր ազդեցութիւնների միջոց... Մի մասը վաղաժամ ձգվել է և մարել խանձարուրի մէջ: Միւս մասը կարողացել է ապրել ու զարգանալ դէպի «պետութիւն»: Սակայն այդ ապրող ու յարատեւող համայնքների մի մասը միայն դարձան «ազգ» ու «հայրենիք», բառիս ճշմարիտ նշանակութեամբ: Միւս մասը մնաց դարբեր շարունակ կիսանօժաղ ու կիսաբարբարոս, նախարային վիճակում:

**Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն**

Վ. Յ. Գ. VI Կեդր. կոմիտէն ստացած է՝ 1908 նոյեմբեր առ 1 յուլիս 1909.—Անտառի խմբից 38 ռուբլի 25 կոպէկ, Գեղարեւս 5, Առիւծ 9, Բաբկիկ 25, Բարեկամ Երկրորդ կէտը 25, Ֆոսոս 10: Գումար 112 ռուբլի 25 կոպէկ:

Նաւահանգսի տեղ. կոմիտէն՝ Առ 1-ն ապրիլ 1909 թ.—Ռուս. ընկ. բան. միութիւն 38 ռուբլի 50 կոպէկ, Մ. Ի Պոլիսի բան. միութիւն 5. 40, Ճորոխ խմբ. 8. 50, Բօֆի բան. միութիւն 1. 50, Մալիսի խ. 7. 50, Փարոս խ. 18. 40, Պոնտոս խ. 4. 70, Սիս-ի բան. միութիւն 69. 68, Ռուս. ընկ. բան. միութիւն 25, Ռուս. ընկ. Նասի բան. միութիւն 4. 50, Գաչկանիների միութ. 3, Ռուս. ընկ. Նաս. բան. միութ. 4. 50, Սեվ-ի բան. միութիւն 14. 10, Պոնտոս խ. 4. 20, Ռուս. ընկ. բան. մ. 25, Ռուս. ընկ. Ալիւրի մ. 5, Բօֆի բան. մ. 1. 70, Երկաթի բան. մ. 3, Ռուս. ընկ. բան. մ. 30, Կերձակ խ. 25, Ռուս. ընկ. ալիւրի մ. 4. 50, Ճորոխ խ. 21, Բօֆի բան. մ. 1. 45, Ռուս. ընկ. բան. մ. 40, Սիս-ի Պոլիսի բան. մ. 10. 80, Ռուս. ընկ. Նաս, բան. մ. 4. 50, Փարոս խ. 10. 50, Ռուս. ընկ. ալ-ի բն. մ. 5, Ռուս. ընկ. ալ-ի բն. մ. 5, Սեվ-ի ընկ. բն. մ. 9. 16, Գարաձիսի բն. մ. 20. 70, Ռուս. ընկ. բն. մ. 30, Ռուս. ընկ. Նաս. մ. 4, Ռուս. ընկ. բն. մ. 29, Սիս Պիսի բն. մ. 10. 22, Բոս. ընկ. բն. մ. 17, Ռուս. ընկ. բն. մ. 4, Բօֆի բն. մ. 1. 50, Ռուս. ընկ. բն. մ. 20, Ռուս. ընկ. ալ. մ. 6, Ռուս. ընկ. Նաս. մ. 9, Ճորոխ 1 խ. 14. 80, Կերձակ խ. 42. 25: Գումար 619 ռուբլի 56 կոպէկ:

ՋրԱՇԵՆԻ ԿՕՄԻՏԵՆ՝ յուլիսից ղեկ. 31 1908.—Ասաթի արեւից 74 ռուբլի, Եռանդ խ. 22, Սարք խ. 26. 40, Բան. միութ. 170. 46, Սեվ-ի ընկ. խմբ. 5. 38, Գեղարցից պարսի հաւելին 5. 97: Գումար 304 ռուբլի 21 կոպէկ:

ԵՄԱԿԱՍՏՈՐԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ՝ 1908 յուլիս-դեկտ. 31.—Հերոսական խ. 13 ռուբլի 20 կոպէկ, Կայծակ խ. 1. 50, Էս 1. 50, Էս սեփական գանձանակից 2. 69: Գումար 18 ռուբլի 89 կոպէկ:

ԱՆՏԱՌԻ ՄԱՐՄԻՆ՝ առ 1-ն յունւար 1909 թ.—Անդրանիկ խմբ. 21 ռուբլի 60 կոպէկ, Տարոն խ. 19, Չորավայրի Հրայր խ. 3. 25, Չորավայրի Նորակազմ խ. 5, Տարոն խ. 11: Գումար 59 ռուբ. 85 կոպ.:

ՋՐԱՇԱՐԿԻ ՄԱՐՄԻՆ՝ 1908 օգոստոսից ղեկ. 31.—Անդրանիկ խմբի հետեւեալ ընկերներից՝ Գիւրե 5 ռուբլի, Գարբին 2. 50, Բազէ 2. 50, Առս 5, Յրակ 7. 50, Շաւար 5, Արեւ 2. 50, շենեկից 5, Խոնր 5, Սուրէն 2. 50: Առիւծ խմբի հետեւեալ ընկերներից՝ Արա 2 ռուբլի 50, Վահան 2. 50, Կայծակ 2. 50, Յոլակ 2. 50, Ասլան 2. 50, ձարա 2. 50, Կասնարուխ 2. 50, Լարակոզ 2. 50: Գումար 62 ռ. 50 կ.: